

Գէորգ Սկեւոսցիէ յօրինուած այս Քարոզ-Գանձերը, սովորաբար տուններու առաջին տողերու սկզբնատառերով կը կազմեն Գէորգեա քան:

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԳԵՈՐԳ ՍԿԵՒՌԱՅԻ. Ալիշան Սիսուանի մէջ նկատողութեան առած է նաեւ Գէորգի կատարած աշխատանքը նըկատմամբ մեր Շարականներուն⁶³: Բաւական թուով Շարականներու մէջ, մեծ մասով 1500է վերջ ընդօրինակուած, կը կարգանք թէ այդ Շարականը գրուած է ի լաւ եւ յընտիւր օրինակէ Սըսոյ առաջի վարժապետին եւ անուն խոհիլ որքորջելոյ, եւ կամ ուրիշի մը մէջ՝ գըրուած 1346ին ի գաւառին խարքերդոյ ի վանքն խոհիլԱՅ. Իսկ ուրիշ մը կ'ընդօրինակուի 1554ին ի լաւ եւ յընտիւր օրինակէ խոհիլԱՅ. զարձեալ ուրիշ մըն ալ գրուած 1666ին Գիւմրիւշխանէ՝ ի լաւ եւ յընտիւր յօրինակէ որ է խոհիլ: Անուններու այս տարբեր զանազանակներով հանդերձ, հարկաւոր է ընդունիլ որ անոնք ծագած են միեւնոյն մայր տիպէն, որ կ'ընծայուի խոհիլ, խոհիլ, խոհիլ անձի մը, եւ որ յետոյ Գէորգ Վարդապետ, Առաքել Սիւնեցիի բառով, ուղղած է, ու այդպէս ընդհանրացած են անոր օրինակները:

Ի՞նչ եղած է արդեօք այս երկու Շարականները վերատեսնողներու կատարած աշխատանքը. ասոր նկատմամբ զազաւար մը ունենալու համար, լաւագոյն կը համարիմ մէջ բերել ինքնին Առաքել Սիւնեցիի գրածը, Դաւիթ Անյաղթի Սահմանաց գրքին իր լուծմունքներուն մէջ: Խօսելով ոլորակի մասին, այսինքն է Նոր Հայկազեան Բառարանի համաձայն «ուժգնութիւն հնչման յեւեւս ձայնի կամ յառողանութեան», կը գրէ. «Տասն կերպիւ ասի ոլորակ. նախ զի բանքն եւ ոտն եւ ձայնն եւ շունչն եւ եղանակն ի միասին ոլորեալ յարմարեցին. միջակ լիցի ձայնն, ոչ քան զկարն աւելի եւ ոչ նուազ, այլ միջակ. զուարճ, զի հնար լիցի քաղցրաձայն երգել եւ մի՛ տգեղ. կենդանի լիցի երգն, այն է ոչ զբաղելով ի կախ ձգել, այլ ի գնացք ասել, զի հասկանալի լիցի լսողաց. զի քերեալ եւ զտեալ եւ ճշմարիտ լիցին բանք երգոյն, ըստ խոհիլ օրինակին ի Շարակնոցն, զոր մեծ վարդապետն Գէորգ ուղղեաց, այն որ զնսայի մարգարէն մեկնեաց ի խընդրոյ Հեթում Թաղաւորին ի Սիւս, զի արհեստն առողանութեան խառնեալ լիցի երգոյն, զի զխորհուրդ բանին յայտնէ, որպէս նոյն խոյն օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գէորգ: Ձայն ամենայն պարտ է ի միասին հիւսել եւ ոլորակել ի ձայն երգոյն»:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

63. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, էջ 105:

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՇՏՈՅՆԵՐՈՒ ՄԷՁ

(Շար. Բագմալիկ, 1971, ք. 1-2, էջ 25-35)

Մկրտութեան բնագիւրներու ձեռագրական մեծ խումբերը բաժնելէ ետք, կ'անցնինք մաս առ մաս քննելու բուն բնագիրը, ջանալով ցոյց տալ թէ դարերու ընթացքին իւրաքանչիւրն անոնցմէ ի՞նչ փոփոխութիւններու ենթարկուած է, եւ թէ այսօր ի՞նչ ձեւով կը ներկայանան մեզի տպագիր օրինակներու մէջ: Մեր աչքին առջեւ ունինք երկու տպագրութիւններ, որոնք կը կիրարկուին այսօր Հայ եկեղեցիէն ներս. առաջինը՝ տպուած Վիեննա 1880ին, որ կը գործածուի կաթողիկէ համայնքէն, եւ երկրորդը տպուած Երուսաղէմ 1961ին, որ ընդհանրացած է Հայ Առաքելական եկեղեցիէն ներս:

1. ՎԵՐՆԱԳԻՐԸ

Մկրտութեան արարողութեան իբր վերնագիր՝ ձեռագիր Մաշտոցներու մէջ ընդհանրացած ձեւն է Կանոն Մկրտութեան, իսկ ստորին լուսանցքներու վրայ կը նշանակուին Մկրտութիւն կամ Կնունք բառերը: Սկզբնական շրջանին, այսինքն մինչեւ ԺԵ-ԺԶ դար, Մկրտութեան ու Դրոշմի արարողութիւնները նկատուած են իբր մէկ խորհուրդ, եւ այդ պատճառով իսկ ձեռագիրներու մէջ ամենեւին չենք հանդիպիր բաժանումի կամ նոր զլխակարգութեան. ԺԵ-ԺԶ դարուն Դրոշմի խորհուրդը կարծէք կը զանազանուի Մկրտութենէն, եւ որով Դրոշմի բնագիրն ստորին լուսանցքներու վրայ կը նշանակուի Դրոշմ բառը՝ տարբեր Մկրտութիւնէն:

Բացի Կանոն Մկրտութեան ընդհանրացած ձեւէն, կը գտնենք ուրիշ կերպեր ալ, այսպէս Կանոն լուսաւոր Մկրտութեան (Ձեռ. Թիւ 1133, ԺԳ դար), Կանոն Մկրտութիւն առնելոյ (Ձեռ. Թիւ 1484, ԺԳ դար), Կանոն յորժամ քրիստոնեայ առնեն (Ձեռ. Թիւ 1304, ԺԴ դար), Կանոն յորժամ Մկրտութիւն կամիցին առնել (Ձեռ. Թիւ 522, տարի

1547), Կանոն յառաջաբանութեան սուրբ եւ կենդանարար Մկրտութեան (Ձեռ. թիւ 1425, տարի 1576), Կանոն կենդանարար եւ սուրբ Մկրտութեան (Ձեռ. թիւ 1269, տարի 1673). Վատիկանեան թիւ 100 Մաշտոցը կը զանազանէ երախայրութիւնը Մկրտութենէն, որով արարողութեան իբր վերնագիր ունի Կարգ երախայրութեան: Բացի ասոնցմէ, բազմաթիւ ձեռագիրներ առանց վերնագրի են, մանաւանդ ԺՁ դարէն սկսեալ, որոնք արարողութիւնը կը սկսին ուղղակի առաջին աղօթքով՝ Տէր Աստուած մեր Աստուած բարերար, առանց կանխող խորագրի մը, այլ լոկ ստորին լուսանցքին վրայ կը նշանակեն Մկրտութիւն բառը, փնտռողին դիւրութիւն ընծայելու համար:

(★) Վիեննական Մաշտոցը արարողութեան վերնագիր դրած է Կանոն սուրբ խորհրդոյ Մկրտութեան: Ձեռագիր Մաշտոցներու մէջ ամենեւին չենք հանդիպիր Սուրբ խորհրդոյ բացատրութեան: Երուսաղէմի 1961ի տպագիր Մաշտոցը ունի Կանոն կենդանարար սուրբ Մկրտութեան, որ աւելի կը մօտենայ զբնագրերէն աւանդածին:

2. ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԽՈՐԱԳԻՐԸ

Յորժամ քրիստոնեայ առնեն... զկատարեալ հասակն և գոդայսն¹: Հին երկաթագիր Մաշտոցներու յատկանշական խորագիրն է սա, ուր կ'ենթադրուի որ մկրտուողը մեծահասակ մը ըլլայ. խորագիրը կը պահանջէ որ երախան մկրտութենէն երեք շաբաթ առաջ ընդունի երեսայական ձեռնադրութիւնը, սորվի քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր կէտերը, եւն.: Խորագիրը կ'աւարտի՝ Այս կարգաւորութիւն չափահասակացն է, նախ երախայրական անդամացի զկատարեալ հասակն եւ գոդայսն բացատրութեամբ:

Եկեղեցւոյ ամենահին աւանդութիւններու ակնարկներով լի այս խորագիրը, բնականաբար ժամանակի ընթացքին անդործածելի պիտի դառնար՝ փոքրահասակներու մկրտութեան ընդհանրանալով: Ասով հանդերձ, ձեռագրական օրէնքներու համաձայն, հին խորագիրը պիտի չկորսուի, այլ մինչեւ ժի դարու ինչ ինչ ձեռագիրներու մէջ պիտի պահուի, փոքրահասակներու մկրտութեան յատուկ խորագրի կողքին:

Հին խորագրին փոխարէն ԺԵ դարուն Գէորգ Երզնկացիի խմբագրութեամբ երեւան կ'ելլէ նորը որ կ'ըսէ. Յորժամ տղայն ուրօրեայ լինի, քահանայն տայ բերել ի գաւիթս սուրբ եկեղեցւոյ: Ամենապարզ խորագիրը պիտի ընդհանրանայ քանի մը դար ետք, սակայն

1. Ձեռագրական մէջբերումներու համար հետեւած ենք Ս. Ղազարի Թ-Ժ դարու երկաթագիր Մաշտոցին (Ձեռ. թիւ 457), հրատարակուած «Բազմավէպ»ի անցեալ (1971, թիւ 1-2, էջ 36-46) եւ ներկայ թիւին մէջ:

մինչ այդ՝ պիտի կատարուին զանազան փորձեր համառօտելու ընդարձակ խորագիրը, որ յատուկ էր հին Մաշտոցներուն:

Առձեռն Մաշտոցներէ շատեր զանց կ'ընեն ամէն խորագիր, ու մկրտութեան արարողութիւնը կը սկսին առաջին աղօթքով, ինչ որ հետեւանք է արարողութեան չափազանց հմուտ ըլլալուն, ինչպէս նաեւ գործածելի ձեռագիր Մաշտոցը չբեռնաւորելու հոգէն:

(★) 1880ի Վիեննական Մաշտոցը ունի առաջին խորագիր մը, յօրինուած հրատարակչներէն, ուր չեն պահուած ձեռագրական ոչ մէկ աւանդութիւն, այլ յօրինողները յարմարեցած են ներկայ դարուն: Ասոր հակառակ Երուսաղէմեան Մաշտոցը ամենահաւատարիմ կերպով արտադրած է հին ընդարձակ խորագիրը, հակառակ որ անգործածելի է իր բովանդակութեամբ:

3. ԱՌԱՋԻՆ ՍԱՂՄՈՍԸ

«Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ» սաղմոսով կը սկսի արարողութիւնը, որ կ'արտասանուի եկեղեցւոյ դրան առջեւ: Այս է հին ու հարազատ ձեւը. սակայն դարերու ընթացքին այնքան նորանոր խորագիրներ կը տեսնուին, որ յետագայ դարերու ձեռագիր Մաշտոցներու մէջ ամբողջովին կը կորսուի այս սաղմոսը եւ կամ կը սպրդին նոր կերպեր, օրինակի համար:

1216ի Մաշտոցը (թիւ 199) ոչ թէ միայն մէկ անգամ, այլ դարձեալ կրկնեն եւ երեք կնեն գնոյն սաղմոս, եւ Արքեմուքիւն եւ փառք:

1268ի Վատիկանեան Մաշտոցը (թիւ 61) ունի նոր սաղմոս մը փոխանակ աւանդականին. Ասի սաղմոս ձկ. Տէր փորձեցեր, եւ Արքեմուքիւն եւ փառս տայ, երիցս ասելով եւ փառս տայ:

1387 եւ 1573ի Մաշտոցները (թիւ 868, 1686) սաղմոսէն ետք կ'աւելցնեն Խնդրեցուք հաւատով. յաջորդ դարու ձեռագիրներէ շատեր պիտի որդեգրեն այս քարոզը:

ԺԵ դարու Գէորգ Երզնկացիի խմբագրութեամբ կ'ընդհանրանայ նոր ձեւ մը. Ասեն սաղմոս. Տուր գաւրութիւն. փոխ. Խոնարհեցու. Քարոզ. Խնդրեցուք. իսկ «Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ» սաղմոսը կը փոխադրուի աւելի ուշ, առաջին աղօթքէն ետք:

ԺԵ դարու Մաշտոց մը (թիւ 711) արարողութիւնը կը սկսի. Օրհնեալ Հոգիդ սուրբ. Սաղմոս. Ողորմեա ինձ. գիտիս ի լման ասա. Փառք Հաւր. եւ իս խաղաղութեան. Արքեմուքիւն եւ փառք. Սաղմոս. Տուր գաւրութ. Խոնարհեցու. Քարոզ. Խնդրեցուք: ԺԲ Տէր ողորմեա:

Այս եւ ասոնց նման անթիւ զանազանութիւններէ յստակ կը տեսնուի թէ մեր նախնիք ինչպէս ուղած են զգացնել խորհուրդին վեհութիւնը եւ կարեւորութիւնը, Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ սաղմոսը

փոխանակելով ճոխ արարողութեամբ մը: Դեռ աւելիին ալ կը հանդիպինք, այսինքն բացի սաղմոսներէ եւ աղօթքներէ, ժեղարուն կը յայտնուի նարոտի դործածութիւնը, որ հոգեւոր հանդէսին արտաքին փայլ մըն ալ կու տայ: 1436ի եւ 1464ի Մաշտոցները (թիւ 178, 187) կը պատուիրեն «Եւ առեալ զմարաւտն մանեն»։ 1582ի ձեռագիրը քահանային կու տայ նարոտը մանելու պարտականութիւնը, 1554ի օրինակը՝ քահանային եւ կնքահօր: 1583ի Մաշտոցը կը պահանջէ որ նարոտն ըլլայ կարմիր եւ սպիտակ:

(★) Բոլորովին նոր է 1880ի Վիեննական Մաշտոցի կազմը, որ փոխանակ Տէր ոչ բարձրացաւ սաղմոսին, ունի միջնադարեան նորամուտ սովորութիւն մը, հետեւեալ կերպով.

Քարոզէ Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Քահանայն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ:

Քահանայն խնդրեալ առնու զանուն երախայիմ, եւ հարցանէ զսա յանունէ ասելով.

(Այս անուն) զի՞նչ խնդրես յեկեղեցւոյն Աստուծոյ:

Պատասխանէ կնքահայրն. Զհաւատ:

Քահանայն. Հաւատն զի՞նչ շնորհէ քեզ:

Կնքահայրն. Զկեանս յաւիտենականս:

Քահանայն. Արդ՝ եթէ կամիս ի կեանս մտանել, պահեա զպատուիրանս: Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ զընկեր քո իբրեւ զանձն քո:

Յստակ կը տեսնուի որ Մաշտոց հրատարակողները իրենք իրենցմէ հիւսած են այս հատուածը եւ ներմուծած արարողութենէն ներս, որովհետեւ ոչ մէկ Մաշտոցի մէջ կը հանդիպինք այս արարողութեան: Կայ նման ձեւով հիւսուած ուրիշ հատուած մը, որ մկրտութեան բանաձեւէն անմիջապէս առաջ պիտի տեսնենք, եւ որ կը համապատասխանէ ձեռագրական տուեալներու: Ուստի պէտք է դուրս հանել Մաշտոցէն առաջին այս հարց ու պատասխանը՝ իբր նորահնար արարողութիւն:

Երուսաղէմեան 1961ի Մաշտոցը, Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ սաղմոսէն առաջ ունի. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն. Հայր մեր...: Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած մշմարիտ. Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի...: Նման սկզբնաւորութեամբ ձեռագիրներու ակնարկեցինք քիչ առաջ: Աւելի հարազատ եւ բնիկ հայկական պիտի ըլլայ եթէ զանց ըլլան Հայր մեր եւ Ողորմեա ինձ Աստուած սաղմոսը, որովհետեւ ձեռագիրներու մէջ ոչ մէկ արարողութիւն կը սկսի Հայր մերով, իսկ Ողորմեա ինձ Աստուած սաղմոսին տեղն ալ աւելի ուշ է, եւ ոչ թէ Տէր ոչ բարձրացաւ սաղմոսին հետ: Նմանապէս եկամուտ են Տէր լոյս իմ եւ կեանք իմ սաղմոսը, Սուրբ խաչիւս քարոզը եւ Պաշտօնեա աղօթքը, որոնց բացարձակ կերպով ոչ մէկ

ձեռագիր Մաշտոցի մէջ կը հանդիպինք, բացի ժեղարուն ուշ դարու խմբագրուած գրչագիրներէ, որոնք չափազանց հեռու են հայկական բնիկ ու հարազատ արարողութենէն:

4. ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ

Տէր Աստուած մեր, Աստուած բարերար, որ զվրիպեալս աղօթքով կը փախուի երախայութեան կարգի առաջին մասը, որ հին ժամանակ կը կատարուէր մկրտութենէն տարբեր օր մը (երեք կամ աւելի շաբաթներ առաջ): Երախայութեան յաջորդ արարողութիւնը պիտի սկսի մկրտութեան օրը:

Աղօթքը բոլոր ձեռագիրներու մէջ պահպանուած է մաքուր եւ անարատ, ընդունելով հանդերձ ձեռագրական տարբերակներ: Աչքի առջեւ ունենալով Ս. Ղազարի Երկաթագիր Մաշտոցը (թիւ 457), կը տեսնենք թէ դարեր առաջ, սկսեալ Թ-Ժ դարերէն մինչեւ ԺԵ-ԺԸ դար, նոյնպէս օրինակած են աղօթքը:

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ սաղմոսը եւ Տէր Աստուած մեր, Աստուած բարերար աղօթքը կը կազմեն երախայութեան արարողութիւնը կանխող կարգը: Գէորգեան խմբագրութիւնը ունի հետաքրքրական յաւելուած մը, որ կազմուած պէտք է ըլլայ ժողովրդական աւանդութիւններէն.

Յետ այսորիկ քահանայն մուծանէ զտղայն մանկաբարձան ի ժամատունն, եւ տայ ծուր կրկնել ի. եւ կամ ըստ քուոյ աւուր ծննդեան: Եւ ասն Սաղմոս. Մտից ի տուն քո երկիր պաղից: Տէր առաջնորդեա ինձ: Քարոզ. Խնդրեսցուք: Խ Տէր ողորմեա: Աղաւթք. Առաջնորդ կենաց: Եւ ապա դնէ մանկաբարձն զտղայն ի դուռն եկեղեցւոյն, եւ ասն Սաղմոս. Ի քեզ անկայ ես յարգանդէ յորովայնէ: Եւ խոստովանեալ կնքահայրն արժանապէս եւ առեալ զքողովքին մեղաց, եւ ապա ասն Սաղմոս. Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ: Գ անգամ եւ եւս խաղաղութեան. եւ Աւրհնութիւն եւ փառք: Եւ յասելն մանեցեմն նարատ կարմիր եւ սպիտակ. Գ նարատ: Եւ ապա առնու կնքահայրն զմանուկն ի գիրկս իւր (թիւ 1157):

(★) Վիեննական 1880ի տպագիր Մաշտոցը, բնագիրներու մէջ հաւատարմօրէն հետեւած ըլլալով 1840ին Ս. Ղազար հրատարակուած Մաշտոցին, աղօթքները կը կրեն երկաթագիր Մաշտոցին դրոշմը:

Երուսաղէմեան տպագրութիւնը շատ հաւանաբար օգտագործած է ԺԸ-ԺԹ դարու օրինակ մը, որով աղօթքը կրած է անթիւ շեղումներ, կորսնցնելով հնութեան բոյրը: Ստորեւ երկսիւն կը նշանակենք չեղադիր այն տարբերակները, որ ունին Ս. Ղազարի երկաթագիր Մաշտոցը եւ Երուսաղէմեան 1961ի տպագրութիւնը.

ՁԵՌԱԳԻՐ

ՏՊԱԳԻՐ

Տէր Աստուած մեր, Աստուած բարե-
րար, որ զվրիպեալս եւ զհեռացեալս ի
քէն զազգս մարդկան, զմերժեալս եւ
զանկեալս ի դրախտէն փափկութեան,
զոր ոչ կարացեր անտես առնել, այլ դը-
թացեալ խոնարհեցար ի քուժմէ բար-
ձրութենէդ ի մեր նուաստ բնութիւնս,
եւ առնելով զբոլորս մեր բայց ի մե-
ղաց...:

Եւ տուր զօրութիւն եւ օգնութիւն եւ
արժանաւորիլ եւ հասանել ի մաքրու-
թիւն սուրբ աւազանին ամբիժ կենացդ,
եւ ի ժառանգութիւն որդեգրութեան ար-
քայութեանդ երկնից, Քրիստոսիւ Յի-
սուսիւ Տերամբ մերով, որում վայելէ
փառք...:

Համեմատութենէն կը տեսնուի թէ ինչպէս Երուսաղէմեան օրի-
նակէն դուրս մնացած են ինչ ինչ բառեր, կամ ենթարկուած են
փոփոխութեան, ու մանաւանդ ներս սահած է ամբողջ նախադա-
սութիւն մը, որու ամենեւին չենք հանդիպիր ձեռագիր Մաշտոց-
ներու մէջ:

5. ԵՐԵՔ ՍԱՂԱՍՆԵՐ

Մկրտութեան բուն արարողութիւնը կը սկսի եկեղեցիէն դուրս,
դրան առջեւ արտասանուած երեք սաղմոսներով. ԻԳ. Առ քեզ Տէր
Համբարձի. ԻԵ. Դատ արա ինձ Տէր. Ծ. Ողորմեա ինձ Աստուած:
Երեք սաղմոսներ, որոնք իրարմէ եղած են միշտ անբաժան, եւ կ'ըս-
ուին մեծ հանդիսաւորութեամբ «հանդերձ միաբան ուխտիւն», ինչ-
պէս կը պահանջեն Ս. Ղազարի եւ Երեւանեան երկաթագիր Մաշտոց-
ները եւ ուրիշ բազմաթիւ հին ձեռագիրներ: 1547ի Մաշտոցը աւան-
դական երեք սաղմոսներուն մէջ յանկարծ կ'երեւցնէ նաեւ «Տէր լոյս
իմ եւ կեանք» սաղմոսը, ինչ որ պատահական է:

(★) Վիեննական Մաշտոցը երեք սաղմոսներէն դուրս ձգած է ա-
ռաջին երկուքը, պահելով միայն երրորդը Ողորմեա ինձ Աստուածը,
մինչ Երուսաղէմեան տպագրութիւնը երեք սաղմոսներէն զատ ունի
նաեւ չորրորդ յաւելեալը Տէր լոյս իմ եւ կեանք սաղմոսը, այս տար-
բերութեամբ որ չեն ըսուիր մկրտութեան օրը եկեղեցւոյ դրան առ-
ջեւ, այլ երախայութեան կարգին սկիզբը՝ «Տէր Աստուած մեր Աս-
տուած բարեբար» աղօթքէն առաջ: Փոխած է նաեւ սաղմոսներու ա-

Տէր Աստուած մեր, որ զհեռացեալս
ի քէն զազգս մարդկան, զանկեալս ի
դրախտէն փափկութեան ոչ անտես արա-
րեր: Այլ զթացեալ խոնարհեցար ի քուժ-
մէ բարձրութենէդ ի մեր նուաստու-
թիւնս, առնելով զբոլորս մեր բնութիւնս
բայց ի մեղաց...:

Նորոգեա զսա յամենայն նեղութեան
մեղաց եւ ազատեա ի ծառայութեան սա-
տանայի:

Եւ տուր սմա զօրութիւն եւ օգնա-
կանութիւն արժանաւորիլ եւ հասանիլ ի
մաքրութիւն սուրբ աւազանին, եւ ի ժա-
ռանգութիւն երկնից արքայութեանդ,
Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ,
ընդ որում չօր միանգամայն եւ Հոգւոյդ
սրբոյ, վայելէ փառք...:

ւանդական կարգը, փոխանակ Առ քեզ Տէր, Դատ արա, Ողորմեա ի,
կը դնէ նախ Ողորմեա ինձ, Տէր ոչ բարձրացաւ, Առ քեզ Տէր, Դատ
արա, Տէր լոյս իմ եւ կեանք:

6. ԶՈՅԳ ՔԱՐՈԶ ԵՒ ԶՈՅԳ ԱՂՕԹՔ

Սաղմոսներէն անմիջապէս ետք կը հետեւին.

Քարոզ. Եւ եւս վասն երախայիս աղաչեցուք.

Աղօթք. Ընկալ մարդասէր Տէր զընծայեալս ի քեզ.

Քարոզ. Եւ եւս վասն քաւութեան մեղաց իջանելով.

Աղօթք. Տէր Աստուած մեծ եւ փառաւորեալ յամենայն:

Առաջին աղօթքով կը խնդրուի Աստուծմէ ազատել երախան սա-
տանայական ազդեցութիւններէն, որպէսզի արժանի ըլլայ մկրտու-
թեան ջուրին եւ Քրիստոսի շնորհին: Երկրորդ աղօթքով կ'ենթա-
դրուի որ երախան հրաժարած է սատանայէն, ուստի կը խնդրուի Աս-
տուծմէ որ հեռու պահէ զինքը սատանայէն, որպէսզի ի դէպ ժամա-
նակի, այսինքն բուն մկրտութեան օրը՝ կարենայ ընդունիլ Սուրբ
Հոգին, եւ մկրտութեամբ անդամակցիլ սուրբ եկեղեցւոյ:

Ձեռագիր Մաշտոցները գրեթէ միշտ ունին քարոզներն ու աղօթք-
ները. կան սակայն բացառութիւններ, ինչպէս 1616ի եւ 1657ի Մաշ-
տոցները զանց կ'ընեն երկրորդ քարոզն ու աղօթքը: Ասոնց հակա-
ռակ 1216ի Մաշտոցը առաջին աղօթքէն ետք կ'աւելցնէ երկրորդ մը
Տէր Աստուած լուսաւորիչ եւ իմաստնացուցիչ, կցելով երկուքը խա-
ղալութիւն ամենեցունով. ապա կը յաւելու սաղմոս մը Ուրախ եղէ:
Նմանապէս երկրորդ աղօթքէն ետք ունի Ո բնակեալ եւ սաղմոսը եւ
Աստուած յաւիտեան կամ զքեզ կարդամք աղօթքը: Այս եղանակն Մաշ-
տոցը ունեցած է իր ազդեցութիւնը սակաւաթիւ ձեռագիրներու վրայ,
ինչպէս 1434, 1469, 1576 տարիներու Մաշտոցներու վրայ, որոնք որ-
դեգրած են Ուրախ եղէ եւ սաղմոսը, առաջին աղօթքին եւ երկրորդ
քարոզին միջեւ:

7. ՍԱՏԱՆԱՅԷ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Քահանան կը հրամայէ երախային արեւմուտք դառնալ, եւ կը
հրաժարեցնէ սատանայէն երեք անգամ: Այս է իսկութիւնը հրաժա-
րումին: Սակայն երբ անցնինք քննելու ձեռագրական բնագիրները,
անթիւ ու զանազանեալ ձեւերով կը ներկայանան մեզի. գրեթէ ամէն
ձեռագիր Մաշտոց ունի իր յատուկ շարադասութիւնը. շատ քիչ օ-
րինակներ են որ կու դան նոյնանալ իրարու:

Եթէ ուղենք դասաւորել, երեք մեծ խումբերու տակ կարելի է
համախմբել զանոնք.

ա. Քահանան երախային հետ միաբերան կը հրաժարի սատանայէն ըսելով. Հրաժարիմք ի քէն սատանայ եւ յամենայն խաբէութենէ քուսմէ, եւ ի պատրանաց քոց եւ ի պաշտամանէ քուսմէ, եւ ի գնացից քոց եւ ի հրեշտակաց քոց: Ապա քահանան խօսքը դարձնելով երախային երեք անգամ կը հարցնէ ըսելով. Հրաժարե՞ս. երախան երեք անգամ կը կրկնէ Հրաժարեմ: Այս ձեւին կը հետեւին երկաթազիր Մաշտոցները եւ ապա յաջորդ դարերուն բազմաթիւ ձեռագիրներ:

բ. Քահանան խօսքը կ'ուղղէ երախային ու կը հարցնէ. Հրաժարե՞ս ի սատանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա, եւ ի պատրանաց նորա, եւ ի գնացից նորա եւ ի հրեշտակաց նորա: Երեխան երեք անգամ կը պատասխանէ Հրաժարեմ: Այս երկրորդ ձեւը յատուկ է Գէորգ Երզնկացիի խմբագրութեան պատկանող ձեռագիրներուն, եւ պատճառն ալ կը թուեն ըսելով թէ մկրտող քահանան իր մկրտութեան օրը հրաժարած է սատանայէն, ուստի պէտք է ըսէ Հրաժարիմք, ոչ ալ խօսքը պէտք է ուղղէ ներկաներուն Հրաժարե՞մ, այլ ուղղակի մկրտողին հարցնէ Հրաժարե՞ս, որովհետեւ երախան պէտք է հրաժարի: Համեմատութեամբ՝ սակաւթիւ Մաշտոցներու մէջ կը գտնենք Գէորգեան բանաձեւը:

գ. Պատմական ձեւը. քահանան կ'ըսէ. Երախայս հրաժարէ ի սատանայէ եւ յամենայն խաբէութենէ...: Ապա խօսքը կ'ուղղէ երախային ու կը հարցնէ երեք անգամ Հրաժարե՞ս, պատասխան ընդունելով Հրաժարեմ: Այս երրորդ ձեւին՝ շատ քիչ անգամներ կը հանդիպինք ձեռագիրներու մէջ, հակառակ որ 1216ի Մաշտոցը ունի ճիշտ այս ձեւը, եւ իբր օրինակ ծառայած է յաջորդ դարու ձեռագիրներու²: Ընդհանուր ալս բաժանումներէն ետք եթէ զննելու ըլլանք իւրաքանչիւր ձեռագիր, պիտի տեսնենք թէ հարցաքննութեան մէջ ամէն Մաշտոց ունի իրեն յատուկ բան մը. կը թուենք գլխաւորները եւ աչքի զարնող տարբերակները.

եւ դարձեալ հարցանէ քահանայն. Հրաժարե՞ս, հրաժարե՞ս, հրաժարե՞ս: Եւ ըստ միոյ միոյ հարցմանն ասացէ. Հրաժարեմ. (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար):

Եւ դարձեալ ասէ ցնա քահանայն երեք անգամ. Հրաժարե՞ս ի սատանայէ: Եւ ըստ միոյ միոյ հարցմանն ասացէ երախայն. Հրաժարեմ. (Ձեռ. թիւ 1484, ԺԳ դար):

Դարձեալ հարցանէ քահանայն գերախայն երիցս. Հրաժարե՞ս, հրաժարե՞ս, հրաժարե՞ս: Դարձեալ երախայն ասէ երիցս. Հրաժարեմ, հրաժարեմ, հրաժարեմ. (Ձեռ. թիւ 1895, տարի 1503):

2. Ս. Ղազարի թիւ 199 (տարի 1216) յաւելեալ աղօթքները նախապէս հրատարակեցինք. հմտ. Բազմ. 1971, թիւ 1-2, էջ 30-32:

Հրաժարե՞ս ի սատանայէ... Եւ զայս Գ անգամ ասացէ: Եւ երախայն ասէ. Հրաժարիմ: Եւ դարձեալ Գ անգամ հարցանէ գերախայն. Հրաժարե՞ս, հրաժարե՞ս, հրաժարե՞ս: Եւ ցա ասէ. Հրաժարելով հրաժարեմ. (Գէորգ Երզնկացիի խմբագր.):

Տարբերակներէն յստակ կը տեսնուի թէ հայկական ձեռագիր Մաշտոցները, զրեթէ առանց բացառութեան, հրաժարումի բանաձեւին մէջ կու գան նոյնանալ իրարու հետ հետեւեալ կերպով. նախ կ'արտասանուի հրաժարման ընդհանուր բանաձեւը, որմէ վերջ քահանան երեք անգամ կը հարցնէ եւ երեք անգամ կ'ընդունի երախային պատասխանը թէ Հրաժարեմ:

(★) Ո՛չ Վիեննական եւ ո՛չ Երուսաղէմեան տպագրութիւնները կը հետեւին ձեռագիրներու աւանդած ընդհանուր կանոնին. առաջինը ունի ամբողջովին նոր բանաձեւում մը, իսկ երկրորդը զուրկ է հարցում պատասխանէ: Ստորեւ կը զննենք նախ ա. Երկաթազիր Մաշտոցի հրաժարման բանաձեւը, ապա բ. Վիեննական տպագրութիւնը, հուսկ գ. Երուսաղէմեանը, պարզապէս ցոյց տալու համար թէ որքան հեռացած ենք այսօր հին աւանդութենէն.

ա. Եւ ապա հրամայէ երախային դառնալ յարեմուտս, եւ երդմեցուցանէ երիցս անգամ ասելով այսպէս. Հրաժարիմք ի քէն սատանայ եւ յամենայն խաբէութենէ քուսմէ, եւ ի պատրանաց քոց եւ ի պաշտամանէ քուսմէ, եւ ի գնացից քոց եւ ի հրեշտակաց քոց:

Եւ դարձեալ հարցանէ քահանայն. Հրաժարե՞ս, հրաժարե՞ս, հրաժարե՞ս:

Եւ ըստ միոյ միոյ հարցմանն ասացէ. Հրաժարեմ:

բ. Ապա հրամայէ քահանայն երախային կամ կնիքաօրն դառնալ դէպ յարեմուտս, եւ հարցանէ գերախայն յամենայն ասելով. Այս անուն հրաժարե՞ս ի սատանայէ:

Կնք. Հրաժարիմ:

Քնն. Եւ յամենայն խաբէութենէ նորա:

Կնք. Հրաժարիմ:

Քնն. Յամենայն չար դործոց, ի խորհրդոց, ի գնացից եւ ի չար կամաց նորա:

Կնք. Հրաժարիմ:

Քնն. Յամենայն չար հրեշտակաց, պաշտօնէից, կամարարաց, եւ յամենայն չար զօրութենէ նորա հրաժարելով հրաժարի՞մ:

Կնք. Հրաժարիմ:

Եւ քահանայն ասէ. Հրաժարիմք ի քէն սատանայ, եւ յամենայն խաբէութենէ քուսմէ, ի պատրանաց քոց եւ ի պաշտամանէ քուսմէ, ի խորհրդոց քոց, ի գնացից քոց, ի չար կամաց քոց, ի չար հրեշտակաց քոց, ի չար պաշտօնէից քոց, ի չար կամարարաց քոց եւ յամենայն չար զօրութենէ քուսմէ. (էջ 7):

գ. Ապա կնիքաօրն առնու գերախայն ի գիրկն, դառնալ յարեմուտս, եւ ասէ ընդ քահանային երիցս անգամ. Հրաժարիմք ի սատանայէ եւ եւ յամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա, եւ յամենայն չար զօրութենէ նորա. հրաժարելով հրաժարիմք. (էջ 21):

8. ՀԱՒԱՏՔԻ ԴԱԽԱՆԱՆՔԸ

Ստանալիս հրաժարել է ետք, քահանան երախան կը դարձնէ աբեւելք եւ կը հարցնէ թէ կը հաւատա՞ս ամենասուրբ Երրորդութեան, ու կ'ընդունի երախային պատասխանը թէ Հաւատամ:

Հաւատքի դաւանանքի հարցումներուն մէջ չկան ձեռագրական մեծ տարբերակներ. բացի քանի մը բացառութիւններէ, սովորաբար քահանան խօսքը կ'ուղղէ երախային թէ Հաւատա՞ս...: Հինէն ի վեր հարցումները ունեցած են երկու խմբադրութիւն. հնադոյնը ունի համառոտ ձեւ մը. երկրորդը աւելի ընդարձակ է: ԺԵ. դարուն երեւան կ'ելլէ աւելի ճոխացած ձեւ մը, որով մեզի հասած են երեք խմբադրութիւններ հետեւեալ ձեւերով.

ա. Հաւատա՞ս յամենասուրբ Երրորդութիւնն ի Հայր եւ յորդի եւ ի Հոգին սուրբ. (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար):

բ. Այս անուն հաւատա՞ս յամենասուրբ Երրորդութիւնն, ի Հայր եւ յորդի եւ ի Հոգին սուրբ, ի սուրբ ծնունդն Քրիստոսի, ի մկրտութիւնն, ի խաչելութիւնն, յերեքօրեայ թաղումն, յերանելի յարութիւնն, յաստուածապէս համբարձումն, ի նստելն ընդ աջմէ Հաւր, յահաւոր եւ ի փառաւորեալ ի միւսանդամ դալուստն հաւատա՞ս. (Ձեռ. թիւ 199, 1216 տարուան):

գ. Հաւատա՞ս յամենասուրբ Երրորդութիւնն ի Հայր եւ յորդի եւ ի սուրբ Հոգին, ստեղծող եւ արարիչ ամենայն արարածոց, յաւետիքն Գարբէլի, ի ծնունդն Քրիստոսի, ի պայծառակերպութիւնն, ի կամաւոր խաչն, ի մահն Քրիստոսի, յերեքօրեայ թաղումն, յիջանելն ի դժոխս, ի յարութիւնն Քրիստոսի, ի համբարձումն, ի նստելն նովին մարմնով ընդ աջմէ Հաւր, ի միւսանդամ դալուստն Քրիստոսի, ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատողական իշխանութիւնն, ի հատուցումն ըստ իւրաքանչիւր դործոց եւ ի կեանսն յաւիտենից. (Գէորգ Երզնկացիի խմբադրութիւն):

Երեք բանաձեւերէն ամէնէն աւելի նուազ ընդհանրացածը երրորդն է, որ հազիւ երբեք կը նշմարուի ձեռագիրներու մէջ, եւ այն ալ միայն Գէորգ Երզնկացիի խմբադրած խումբին մէջ: Երկրորդ ձեւը աւելի յաճախակի կը գտնենք Մաշտոցներու մէջ, սակայն ամէնէն աւելի ընդհանրացածն է առաջինը. հոս ալ սակայն ունինք ձեռագրական տարբերակներ, որովհետեւ զանազան ձեւերով կը կատարուին հարցումները քահանային կողմէ.

Եւ հարցանէ երիցս. Հաւատա՞ս ի Հայր սուրբ, հաւատա՞ս յորդին սուրբ, հաւատա՞ս ի Հոգին սուրբ, ուղիղ հաւատով հաւատա՞ս, հաւատա՞ս, հաւատա՞ս: Երախայն. Հաւատամ, հաւատամ, հաւատամ. (Ձեռ. թիւ 1274, ԺԳ դար):

Հաւատա՞ս յամենասուրբ Երրորդութիւնն ի Հայր եւ յորդի եւ ի Հոգին սուրբ: Զայս երիցս ասելով փառանայն, եւ ըստ միոյ միոյ ասացէ երախայն. Հաւատամ. (Ձեռ. թիւ 144, ԺԳ դար):

Հաւատա՞ս յամենասուրբ Երրորդութիւնն ի Հայր եւ յորդի եւ ի Հոգին սուրբ: Եւ ասէ երախայն. Հաւատամ: Հաւատա՞ս ի ծնունդն Քրիստոսի, ի մկրտութիւնն, ի խաչելութիւնն, ի թաղումն, ի յարութիւնն, յաստուածապէս համբարձումն, ի

միւսանդամ դալուստն: Եւ ասէ երիցս. Հաւատամ: Դարձեալ հարցանէ. Հաւատա՞ս ի Հայր, հաւատա՞ս յորդին, հաւատա՞ս ի սուրբ Հոգին: Եւ ըստ միոյ միոյ ասէ. Հաւատամ. (Ձեռ. թիւ 1319, տարի 1530):

Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն ի Հայր եւ յորդի եւ ի սուրբ Հոգին: Եւ ասէ փառանայն. Հաւատա՞ս: Եւ երիցս ասէ. Հաւատամ. (Ձեռ. իւ 338, տարի 1554):

Ապա դարձուցանէ յարեւիս, խոստովանելով գմիաստուածութիւն սրբոյ երրորդութեանն, երիցս անգամ այսպէս ասելով. Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն, ի Հայր եւ յորդի եւ ի Հոգին սուրբ, ի ծնունդն Քրիստոսի, ի մկրտութիւնն, ի խաչելութիւնն, ի թաղումն, յերեքօրեայ յարութիւնն, յաստուածապէս համբարձումն, յահաւոր եւ ի միւսանդամ դալուստն հաւատա՞ս (sic): Եւ առ մի մի ասէ երեխայն. Հաւատամ: Եւ ասէ փառանայն. Հաւատա՞ս ի Հայր: Եւ ասէ երախայն. Հաւատամ ի Հայր: Եւ ասէ. Հաւատա՞ս յորդին: Եւ ասէ. Հաւատամ յորդին: Եւ ասէ. Հաւատա՞ս ի սուրբ Հոգին: Եւ ասէ. Հաւատամ ի սուրբ Հոգին. (Ձեռ. թիւ 82, տարի 1567):

(★) Առձեռն ունեցած մեր գոյգ տպագրութիւններէն, ոչ Վիեննականը եւ ոչ Երուսաղէմեանը կը համաձայնին ձեռագրական տրւեալներուն: Վիեննական օրինակը ունի նորութիւններ, որոնք հնարուած են հրատարակիչներու կողմէ, այսպէս (ընդգծուածները).

Հաւատա՞ս ի յաստուած ամենակալ յարաբիչն երկնի եւ երկրի. Հաւատամ: Հաւատա՞ս ի Յիսուս Քրիստոս յորդին նորա միածին Տէրն մեր ծնեալն եւ չարչարեալն. Հաւատամ:

Հաւատա՞ս ի Հոգին սուրբ, գտուրք եկեղեցի կաթողիկէ, գիաղորդութիւն սրբոց, զքողութիւն մեղաց, զյարութիւն մարմնոց եւ զկեանսն յաւիտենականս. Հաւատամ:

Անկատար է նաեւ Երուսաղէմեան տպագրութիւնը, որ քահանային եւ կնքահօր միաժամանակ ըսել կու տայ. Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն ի Հայր... , որովհետեւ կը պակսի քահանային հարցումը ու երախային պատասխանը, ինչ որ ամէն ձեռագիր Մաշտոց կը պահանջէ անխափան:

9. ԱԻԵՏԱՐԱՆ ՄԱՏԹԵՈՍԻ. «Իսկ մետասան աշակերտն... մինչեւ ի կատարածն աշխարհի»

Հաւատքի դաւանանքն աւարտելուն ու Հաւատամք ի մի Աստուածը սկսելէ առաջ, ԺԶ-ԺԷ դարու սակաւաթիւ ձեռագիրներ ունին աւետարանի այս հատուածը: Առաջին անգամ կը հանդիպինք անոր ԺԳ դարու լատինական եկեղեցւոյ արարողութիւններով լի Մաշտոցի մը մէջ (Վատիկան barb. 100), որ եկեղեցիէն դուրս, յառաջ քան գմկրտութիւնն, երախայութեան կարգին մէջ կը զնէ.

Սդ. ԽԱ. Որպէս փափաքէ եղջերու.

Ընք. յես. Զարթիր զարթիր Երուսաղէմ... սարաւովք անուն է իմ.

Պաղ. Ա. Կորք. Իշխէ ոք ի ձէնջ... հողին Աստուծոյ մերոյ.
Աւետ. Մատթ. Իսկ մեռածան... կատարածն աշխարհի:

Շատ հաւանաբար այս ձեռագրին ազդեցութեամբ, աւետարանի հատուածը մտած է հայկական Մաշտոցներէն ներս. առաջին անգամ կը գտնենք զայն 1497ի Մաշտոցին մէջ, ու յաջորդաբար 1503, 1547 եւ թէ դարու բաւական թիւով օրինակներու մէջ:

(★) 1880ի Վիեննական Մաշտոցը չունի աւետարանի ընթերցումը, մինչ Երուսաղէմեան տպագրութիւնը հետեւած է սակաւաթիւ օրինակներուն, որդեգրելով իսկ միտասան հատուածը, ինչ որ կարելի է զանց ընել, որովհետեւ կը պահուի բնիկ հայկական Մաշտոցներու մէջ, եւ մանաւանդ որ լատին եկեղեցւոյ ազդեցութեամբ մտած է մեր ձեռագրիներէն ներս:

10. ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ

Քահանային հարց ու պատասխանէն ետք, ամէնուն ներկայութեան երախան պէտք է կատարէ հաւատքի դաւանանքը, արտասանելով՝ Հաւատամք ի մի Աստուծոյ, ի բուն, ի լման: Ս. Ղազարի 1480ի տօնացոյցին համաձայն Հաւատամքով կը բոլորի երախայութեան արարողութիւնը. Աստանաւ կատարեցաւ կարգ երախայութեան:

Ամենահին ձեռագրիներու համաձայն, որ երախան մեծահասակ կ'ենթադրէ, խորագիրը կ'ըսէ. Եւ պաշտեն զՀաւատամք Նիկիա ի բուն: Երախան ինքը կ'արտասանէ, եւ փոխանակ յոգնակի հաւատամքի՝ կ'ըսէ Հաւատամք: Եղակի ձեւով ունին Ս. Ղազարի եւ Երեւանի երկաթագիր զոյգ Մաշտոցները, յաջորդաբար 1268ի, ԺԳ դարու երեք Մաշտոցներ (թիւ 336, 144, 1484): Դիտելի է նաեւ սա կէտը, որ կարգ մը ձեռագրիներ, խորագիրն ալ ունին եղակի ձեւով. Եւ ասէ զՀաւատամք. (Ձեռ. թիւ 932, տարի 1459):

Սակաւաթիւ ձեռագրիներու հակառակ, Մաշտոցներու մեծամասնութիւնը յոգնակի ձեւով ունին խորագիրը. Եւ պաշտեն զՀաւատամք. Եւ ասեն զՀաւատամք: 1387ի Մաշտոցը, մկրտութեան ներկայ գտնուող բաղմութեան կը պատուիրէ Եւ ասեն միաբան ժողովուրդն զՀաւատամք, եւ կամ դեռ աւելի եզակի՝ Եւ քահանայք ասեն զՀաւատամք ի բուն. (Ձեռ. թիւ 1011):

Գէորգ Երզնկացիի խմբագրութեան պատկանող ինչ ինչ ձեռագրիներ Հաւատամքէն ետք ունին յատկանշական յաւելում մը. Ասեն զՀաւատամք ի բուն եւ զգաւորքն: Այս տարտամ բացատրութիւնը երբեմն երբեմն պիտի կրկնուի ձեռագրիներու մէջ, սակայն եկամուտ է եւ համեմատաբար նոր: Թէ ի՞նչ կրնայ ըլլալ Եւ զգաւորքն եւ զաղօթքն, դժուար պիտի ըլլար կռահել, եթէ ուշ դարու Մաշտոց մը բացատրած չըլլար: Ս. Ղազարի հարիւրաւոր ձեռագիր

Մաշտոցներէն զրեթէ վերջինը, գրուած 1695ին ունի հետեւեալը. Հաւատամք ի մի. Սուրբ Լուսաւորչին ասացեալն է ի ձայն. Իսկ մեք փառաւորեսցուք: Եւ եւս խաղաղութեան զՏէր: Եւ եւս հաւատով ա: Եւ ասեն զիւր աղօթքն. Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս: Օրինեալ Տէր մեր: Ուրեմն պատարագի հատուած մը եկած է ու տեղաւորուած մկրտութեան արարողութենէն ներս:

(★) Երուսաղէմեան 1961ի Մաշտոցը հաւատարիմ հետեւողն է այս եկամուտ հատուածին, որ շատ լաւ կարելի է զանց ընել, հետեւած ըլլալու համար հայկական հարազատ արարողութեան:

11. ՍԱՂՄՈՍ ՃԺԷ. ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՏԵԱՌՆ

Սաղմոսը կը յաջորդէ Հաւատամքին. առանց բացառութեան ամէն ձեռագիր կը հետեւի այս խորագրին, միաձեւութիւն մը՝ որ քիչ անգամ կը տեսնուի ձեռագրիներու մէջ: Սաղմոսը պէտք է ըսել մինչեւ Բացէք ինձ զդրունս արդարութեան զի մտից ընդ այն համարը, որովհետեւ խորագրիները կը պնդեն այս կէտը. Ասեն Սաղմոս ի քիւ. Խոստովան եղերուք Տեառն, մինչեւ ցայն վայրն որ ասէ. Բացէք ինձ զդրունս. Եւ բացեալ զեկեղեցին մտանեն ի ներքս:

(★) Երուսաղէմեան Մաշտոցը չի հետեւիր տրուած կանոնին, այլ կը շարունակէ սաղմոսը Այս դուռն Տեառն է... Խոստովան եղերուք Տեառն. տասը համարներ, որոնք չեն պահանջուիր ձեռագիր Մաշտոցներէն:

Վիեննական օրինակը միայն մէկ համար աւելի ունի սովորականէն, որ է Այս դուռն Տեառն է եւ արդարք մտանեն ընդ սա. շատ հաւանաբար իմաստի լրում մը տալու համար ներմուծած են հրատարակիչները: Նմանապէս հրատարակիչներու կողմէ յօրինուած են խորագրիներու շարք մը, որոնք ամենեւին կ'անտեսեն ձեռագրիներու աւանդած պարզ ու մեկին խրատները:

Ձեռագրիները միաբերան կը պատուիրեն. Եւ բացեալ զեկեղեցին մտանեն ի ներքս, երբալով առաջի աւագանին:

Ասոր փոխարէն Վիեննական օրինակը ունի հետեւեալը.

Քահանայն աշովն բանայ զդուռն եկեղեցւոյն կամ մկրտարանին ասելով. Բացէք ինձ զդրունս...: Եւ մտանէ ի ներքս, դնելով զծայր ուրարին ի վերայ երախային եւ ասելով ցնա. Մուտ ի տաճարն Աստուծոյ զի ունիցիս մասն ընդ Քրիստոսի ի կեանս յաւիտեականս. ամէն: Ամենեքին մտանեն յեկեղեցին եւ զան դէպ ի սուրբ աւագանն, եւ ասեն. Սղ. ՂԹ. Աղապակեցէք առ Տէր...:

Թէ Վիեննական եւ թէ Երուսաղէմեան Մաշտոցները եկեղեցի մտնելէ ետք ունին Աղապակեցէք առ Տէր ամենայն երկիր սաղմոսը, ինչ որ անհարազատ է, եւ թիւրիմացութեան մը հետեւանքով մտած է Մաշտոցներէն ներս: Մինչեւ թէ դարու ձեռագրիներու մէջ ամե-

նեւին չի տեսնուիր սաղմոսը: 1593ի Մաշտոցը ունի. Յետոյ աղաղակէն սաղմոս. Խոստովան եղերուի, մինչեւ ցայն տեղն որ ասէ. Բացէք: Հոս աղաղակէն բառը դրուած է փոխանակ ասեմի, սակայն յետագայ դարու ձեռագիրներ աղաղակեմը կարգացած են Աղաղակեցէք, եւ կարծելով թէ խօսքը ՂԹ. սաղմոսին մասին է, առած են Մաշտոցէն ներս: 1637ի Մաշտոցը նոյն խօսքը դուրս ձգած է Խոստովան եղերուի աւանդական սաղմոսը, ու անոր փոխարէն պահած է Աղաղակեցէք:

1695ի Մաշտոցը, առաջին անգամ ըլլալով Խոստովան եղերուի սաղմոսը կը փակէ Փառք Հօրով, ապա կ'աւելցնէ Աղօթք. Առ դրան սուրբ Եկեղեցւոյ: Այս յետին դարու նորութեան կը հանդիպինք նաեւ Երուսաղէմեան 1961ի Մաշտոցին մէջ, ինչ որ վտարելի է Աղաղակեցէք սաղմոսին հետ, ի յարգանս հայկական մաքուր արարողութեան:

12. ԵՐԱՅԱՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԻՒՂԸ ԵՒ ՕԾՈՒՄԸ

Այս նիւթին մասին մանրամասն եւ ընդարձակ կերպով անդրադարձած ենք ուրիշ առիթով³, ուր քննութեան ենթարկած ենք բացի Մաշտոցներէն նաեւ պատմական աղբիւրները. հոս կը համառօտենք զխաւոր կէտերը:

Եկեղեցի մտնելուն՝ Ժողովուրդը կ'ուղղուի մկրտութեան աւաղանին կողմը. ձեռագիր Մաշտոցները միաբերան կը պատուիրեն. Պատրաստ ունելով զիւղն սուրբ: Ի՞նչ պէտք է հասկնալ իւղն սուրբ բառերով: Բնական պատճառաբանութեամբ սուրբ իւղը միւռոնն է. կարգ մը հին ձեռագիրներ, օրինակի համար Ս. Ղազարի թիւ 1133 ԺԲ դարու Մաշտոցը, Վատիկանի 1268ի օրինակը եւ յաջորդաբար բազմաթիւ ձեռագիրներ փոխանակ իւղն սուրբի ունին զիւղն աւծուքեան, ինչ որ աւելի տրամաբանական ալ է:

Միւս կողմէ սակայն նկատելի է որ հազիւ եկեղեցի մտած, սարկաւազը կը քարոզէ ըսելով. Եւ եւս վասն իջանելոյ ի յիւզս յայս շրնորիք ամենասուրբ Հոգւոյն, զՏէր աղաչեսցուք: Հոս անիմաստ է օրհնուած սուրբ միւռոնին վրայ դարձեալ կոչել Ս. Հոգիին շնորհքը: Նմանապէս քարոզին յաջորդող աղօթքով քահանան կ'ըսէ. ... Եւ այժմ աղաչեմք գեղ, Տէր բարերար, առաքեալ՝ զնորիս Հոգւոյդ սրբոյ ի յիւզս յայս, զի որ օծցի սովաւ եղիցի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեան...: Ուրեմն իւղի օրհնութիւն մըն է որ կը կատարուի արարողութեան սկիզբը, եւ տարակոյս չկայ որ երախաներու յատուկ իւղ մըն է, տարբեր միւռոնէն:

Այս ենթադրութիւնը համաձայն ալ է պատմական բազմաթիւ

աղբիւրներու, մանաւանդ Յովհան Օձնեցի հայրապետին որ կ'ըսէ. Պարտ եւ արժան է զմկրտութեան ձեռք՝ քահանային օրհնել մի ըստ միոջէ ընդ մկրտելն ըստ բաւականի ժամուն պիտոյից, եւ նոյնժամայն առ մկրտեալն մերձեցուցանելով՝ զօրհնեալն սպառել, եւ մի իշխել զմիանգամ օրհնեալն բազում անգամ օրհնել, եւ միայն օծանել նովաւ գերախայսն... Եւ յայլ խորհուրդ օծման մի իշխեսցէ մատուցանել զնա⁴:

Հակառակ պատմական դրական աղբիւրներու, երախաներու օծումը միշտ մոռացութեան ենթակայ եղած է: Այս կերպով միայն կարելի է մեկնել թէ ինչո՞ւ հնագոյն խումբի բնիկ հայկական Մաշտոցներու մէջ կը գտնենք երախաներու իւղին օրհնութեան քարոզն ու աղօթքը, եւ համապատասխան ոչ մէկ հետք կամ խորագիր երախաներու օծումին:

Գէորգ Երզնկացիի խմբագրութեամբ, մկրտութեան արարողութիւնը կը ստանայ երախան օծելու յատուկ խորագիր մը, եւ ԺԵ դարէն սկսեալ կամաց կամաց կը սկսի ընդհանրապէս նոյն խմբագրութեան պատկանող Մաշտոցներու մէջ, մինչ բնիկ հայկական ձեռագիրները, որոնք չեն աղբուած Երզնկացիին խմբագրութենէն, կը շարունակեն նոյն լուծիւնը մինչեւ ԺԸ դար:

Երախաներու իւղի օրհնութենէն հետք, Երզնկացիի խումբին պատկանող ձեռագիրները կ'ըսեն. Եւ ապա օծանէ սուրբ ձիւքովն զքամակն եւ զսիրտն խաչանման: Իսկ օծութեան պահուն առաջին անգամ 1673ի Մաշտոցն է որ կու տայ մեղի յատուկ բանաձեւ մը. Եւս աւրինութեան եղիցի քեզ յաւծումն սրբութեան ի մեռուցանել զամենայն ախտս մարմնականս անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:

(★) Երախաներու յատուկ ձէթին օրհնութեան եւ օծումին մասին, Վիեննական Մաշտոցը ունի հետեւեալը.

Եկեալ առաջի սուրբ սեղանոյն որ առ աւագանան՝ քահանայն քանայ զքոյքաջոյ ձեռին ի սուրբ ձեռք երախայից, եւ օծանէ այնու խաչածեւ զսիրտ եւ զքիկնամէջ երախային ի նշան մրցութեան ընդդէմ քշնամւոյն, եւ միանգամայն ասէ մի անգամ.

Օծանեմ զքեզ ձիւքով փրկութեան, եւ մատուցանեմ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր առ ի Ժառանգել զյաւիտենական կեանսն, ամէն:

Եւ ապա բամբակաւ կամ միջուկաւ հացի ջնջէ զօծեալ տեղիս երախային եւ զքոյքն իւր:

Հոս նկատի առնուելիք են հետեւեալ կէտերը.

ա. Ամբողջ մէջ բերուած հատուածը զուրկ է ձեռագրական տրւեալէ, այսինքն յօրինուած է հրատարակիչներու կողմէ:

4. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԱԻԶՆԵՑԻՈՅ, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953, էջ 37:

3. Բազմ. 1968, էջ 21-29:

բ. Նմանապէս հրատարակիչներու սխալ ենթադրութեամբ մը, արարողութենէն դուրս ձգուած են իւրն օրհնելու թէ՛ քարոզը եւ թէ՛ աղօթքը, ինչ որ ամէն ձեռագիր Մաշտոց ունի անխափան:

գ. Արարողութեան սկիզբը ծանօթութեան մը մէջ կ'ըսուի. Օրհնութիւն իւրայն երախայից յաւուր մեծի Հինգշաբաթու՝ գիարդ եւ իցէ խափանեալ է ի ժամանակէ հետէ, որով եւ կիրառութիւն այնք... (էջ 1): Վերեւ մեր մէջ բերած հատուածէն յստակ կը տեսնուի որ երախաներու ձէթը կ'օրհնուի արարողութեան ընթացքին, եւ ոչ թէ Աւագ Հինգշաբթի, որ յատուկ է Լատին եկեղեցւոյն:

դ. Օծումի բանաձեւը հայկական չըլլալէ դատ՝ փոխ առնուած է լատինական ծիսարանէն: Ս. Ղազարի թիւ 1173 Սիսի Մաշտոցը, գրւում է 1345ին, որ խառնուրդ մըն է հայ եւ լատին արարողութիւններու, առաջին անգամ ըլլալով գործածած է այդ բանաձեւը՝ որ որդեգրուած է Վիեննական Մաշտոցէն: Ինչպէս տեսանք 1673ի Մաշտոցն է որ առաջին անգամ գործածած է օծման բանաձեւը, եւ այն ալ տարբեր քան լատինականը:

Երուսաղէմի Մաշտոցը աւելի հաւատարիմ հետեւող է ձեռագիրներու, սակայն հրատարակողները դաժնուած են այն դժուարութեան առջեւ, որու ակնարկեցինք քիչ առաջ. մոռնալով որ յառաջիկայ իւրը երախաներու յատուկ իւրն է, տարբեր միւռոնէն, իւրն սուրբ բացատրութիւնը հասկցած են իրր միւռոնը: Արդ ի՞նչպէս օրհնել միւռոնը, որ անկարօտ է օրհնութեան. ի՞նչպէս մեկնել ձեռագիրներու աւանդած քարոզն ու աղօթքը, ուր կը խնդրուի Աստուծմէ իջեցնել յիւզս յայս շնորհք ամենասուրբ Հոգւոյդ... առաքեա՛ զնորիս Հոգւոյդ սրբոյ ի յիւզս յայս:

Երուսաղէմեան Մաշտոցի հրատարակողները հարցը լուծած են փոխելով թէ՛ քարոզի եւ թէ՛ աղօթքին իմաստը, փոփոխութեան ենթարկելով ոչինչ բացատրութիւն մը. Քարոզին մէջ ձեռագիրները ունին. Վասն իջանելոյ յիւզս յայս շնորհք..., տպագիրն ունի. Վասն իջանելոյ շնորհաց Հոգւոյն սրբոյ ընդ իւզս այսորիկ: Աղօթքին մէջ ձեռագիրները ունին. Առաքեա՛ զնորիս Հոգւոյդ սրբոյ ի յիւզս յայս. տպագիրն ունի. Առաքեա՛ զնորիս ամենասուրբ Հոգւոյդ ընդ իւզոյս:

13. ԶՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Ունի ամենապարզ յօրինուածք մը հետեւեալ կերպով.

Սաղմոս ԻԲ. Ձայն Տեառն ի վերայ ջրոց.

Ընթ. յեզեկ. Մարգ. Եւ ցանցից... յԱստուած (ԼԶ. 25-28).

Պօղ. ի Գաղտ. Ապա օրհնեն... Ժառանգք (Գ. 24-29).

Ալեկու Սաղմոս ԻԶ. Տէր հովուեսցէ զիս.

Աւետ. Յովհ. Եւ էր այր... ի Հոգւոյն (Գ. 1-8).

Քարոզ. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի...

Աղօթք. Դու Տէր զօրութեամբ քո մեծաւ արարեր:

Գրեթէ բոլոր ձեռագիր Մաշտոցները, սկսեալ Թ դարէն մինչեւ ԺԲ դար ունին նոյն այս կարգն ու յօրինուածքը: Քահանան որ կանգնած է աւագանին առջեւ, կը թափէ ջուրը աւագանին մէջ խաչանման, խաչածեւ, խաչապէս. Գէորդ Երզնկացիի խմբագրութեան ինչ ինչ ձեռագիրներ կը պահանջեն որ ըլլայ ջուրն ջերմ, եւ քահանան ջուրը աւագան լեցնելէ առաջ՝ խաչը դնէ աւագանին մէջ եւ ապա վրան թափէ ջուրը:

Ի՛նչ սաղմոսը կ'ըսուի ամբողջութեամբ. Մաշտոցներէն մաս մը սաղմոսին իրր կցուրդ կը նշանակեն Մատուցէ՛ք Տեառն որդիք, ուրիշներ Ձայն Տեառն ի վերայ ջրոց:

Եզեկիէլի մարգարէի ընթերցուածէն առաջ 1216ի Մաշտոցը ունի Եսայիի մարգարէութենէն հատուած մը (ԼԵ. 1-2) Ուրախ լեր անապատ... Աստուծոյ մերոյ. մինչ նոյն մարգարէութիւնը Վատիկանի օրինակը (Barb. 100) ունի Եզեկիէլէ ետք: Այս երկու եղական ձեռագիրները չեն ունեցած իրենց ազդեցութիւնը յաջորդ դարերու Մաշտոցներու վրայ:

Եզեկիէլի մարգարէութիւնը կը բաղկանայ չորս համարներէ (ԼԶ. 25-28), ինչ որ ընդունուած է զրեթէ բոլոր ձեռագիրներուն մէջ. Երեւանի երկաթագիր օրինակը ունի յաւելուած մը թէ՛ սկիզբը եւ թէ՛ վերջաւորութեան (ԼԶ. 24-31):

Պօղոս առաքեալի թուղթը կը կարգացուի Գ. 24-29, բացի 1216ի Մաշտոցէն որ կը սկսի համար 23էն:

Ի՛նչ սաղմոսը անխափան բոլոր Մաշտոցներէ պահանջուած է. հազուադիւս կերպով իրր կցուրդ կը նշանակուին ի վայրի դալարւոյ. Օծեր իւրով եւ կամ Տէր ով կացցէ սաղմոսները:

Յովհաննու աւետարանէն կը կարգացուի Գ. 1-8. բացառութիւն պիտի կազմէ լոկ Երեւանի երկաթագիր Մաշտոցը, սկիզբէն աւելի ունենալով երեք համարներ (Բ. 23-25):

Կը հետեւի Քարոզութիւն ի վերայ մկրտութեան ջրոյն, որ նոյնն է Յայտնութեան օրը Զրօրհնէքի արարողութեան քարոզին հետ: Քահանան մէջ կը հանդիպինք ձեռագրական անթիւ եւ այլազան տարբորին մէջ կը հանդիպինք քարոզը բաղկացած է 12 համարներէ, բերականերու: Ընդհանրապէս քարոզը բաղկացած է 12 համարներէ, չիմ ունենալով կամ աւելի տուններ ունին զանազան ձեռագիրներ: Հիմ ունենալով երկաթագիր Մաշտոցներու քարոզը, հետեւեալ նոր համարներուն կը հանդիպինք յաջորդ դարու Մաշտոցներու մէջ.

Վասն ի վերուստ խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր ազաչեսցուք. (Ձեռ. թիւ 1133, ԺԲ դար):

Վասն եպիսկոպոսին այս անուն կենդանութեան զՏէր. (Ձեռ. Վատիկ. թիւ 100, ժ. Գ. դար):

Վասն սրբելոյ առաջիկայ ջրոյս առնել օրհնութիւնսն Յորդանանու զՏէր. (Ձեռ. թիւ 144, ժ. Գ. դար):

Վասն առաջիկայ ջրոյս եւ որք հանդերձեալ են հաւատով ընդունել զօրհնութիւնն ի սմա զՏէր. (Ձեռ. թիւ 182, տարի 1421, Ձեռ. թիւ 1319, տարի 1530):

Վասն լսելի լինելոյ Տեառն ձայնի աղաչանաց մերոց զՏէր. (Ձեռ. թիւ 860, տարի 1591):

Բացի այս տուններէն, կը դտնենք դեռ անթիւ յաւելուածներ բառերու եւ բացատրութիւններու, որոնք պիտի տեսնուին բնագիրներու հրատարակութեան ընթացքին:

Քարոզէն ետք քահանան կացուցանէ գնորդներուն մօտ յաւազանն, եւ կը կարգայ ջուրն օրհնելու աղօթքը. Դու Տէր գորութեամբ քով մեծաւ... առաքեալ զՀոգիդ սուրբ ի ջուրս յայս եւ սրբեալ գա...: 1216ի Մաշտոցը (թիւ 199) ջուրի օրհնութեան համար մէկի փոխարէն ունի հինգ աղօթքներ, այսինքն սովորականն եւ ուրիշ չորս աղօթքներ, որոնցմէ միայն մէկը ընդունելութիւն դտած է յաջորդ դարու ինչ ինչ ձեռագիրներու մէջ, սակայն ոչ իր ամբողջութեամբ, որովհետեւ աղօթքը կէսէն ետք ենթարկուած է փոփոխութեան:

(★) Անցնելով տպագիր օրինակներուն, Վիեննական Մաշտոցը ունի երկու անհարազատ խորագիր. առաջինը՝ նորահնար է. Եզեկիէի մարգարէութենէն անմիջապէս վերջ կը դրէ. Ապա սկսանին մերկացուցանել՝ եթէ տղայ իցէ: Մանուկը մերկացնելու պահը աւելի ուշ է, այսինքն Պօղոսի թուղթէն, Աւետարանէն, քարոզէն եւ աղօթքէն անմիջապէս ետք: Նմանապէս բոլորովին նոր է քարոզին եւ աղօթքին միջանկեալ խորագիրը. Յասել սարկաւազին գփարոզն, կնիքայրն առնու միւսանգամ գերայայն ի գիրկս իւր եւ կայ առաւազանաւ: Խորագիրը բոլորովին անտեղի ու անիմաստ է:

Երուսաղէմեան տպագրութիւնը աւելի մօտէն կը հետեւի ձեռագիրներուն, սակայն զարմանալի կերպով ջրօրհնէքի քարոզը կերպարանափոխ ըրած է, ու բացի քանի մը տուններէն, միւս բոլորը նոր շարագրուած են (հրատարակիչներու կողմէ): Այսպէս ամբողջովին նոր հիւստուած են.

Վասն աստուածային զօրութիւն. զգեցուցանելոյ սորա ընդդէմ...

Վասն անօթ սրբութեան լինելոյ սորա առ ընդունելութիւն...

Վասն գնալոյ սորա յարժանաւոր հրաւեր վերստին կոչման...

Վասն ամուր եւ հաստատուն շնորհելոյ սորա զգիտութիւն...

Վասն ժառանգորդս առնելոյ զսա արդարոցն խոստմանց...

Վասն փրկելոյ զսա եւ զմեզ յամենայն նեղութենէ ի...:

Ինչպէս կը տեսնուի քարոզին իմաստը կերպարանափոխուած է. քարոզը ձեռագիրներու մէջ վերնագիր կը կրէ Քարոզութիւն ի վերայ

մկրտութեան ջրոյն (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար), Քարոզէ վասն մկրտութեան ջրոյն (Ձեռ. թիւ 1133, ԺԲ դար), Քարոզէ սարկաւազն ի վերայ ջրոյն այսպէս (Ձեռ. թիւ 1124, տարի 1648): Երուսաղէմի օրինակը քարոզին առաջին երեք համարները միայն վերապահած է ջուրի օրհնութեան, ապա անցնելով երախային, կը խնդրէ Աստուծոյ մէջ որ երախան ըլլայ Անօթ սրբութեան, փրկելով զինքը եւ զմեզ յամենայն նեղութենէ, ի բարկութենէ, ի վշտաց եւ ի վտանգից...:

14. ՄԻԻՌՈՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ջուրի օրհնութիւնը իր լրումը կը ստանայ միւսումով: Դու Տէր գորութեամբ քով աղօթքէն ետք, քահանան ածցէ ի սուրբ յիւղոյն յաւազանն խաչանման: Տարակոյս չկայ որ երկաթագիր Մաշտոցներու սուրբ իւղը միւսումն է, որովհետեւ շատ մը ձեռագիրներ բացայայտ կերպով կը դրեն միւսումն փոխանակ իւղ բառին:

Միւսումը ջուրին մէջ կաթեցուցած պահուն ներկայիս կ'երգենք աւանդական եւ եզակի շարական մը. Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս այս...: Մեր ուսումնասիրութեան համար օգտագործած 80 ձեռագիր Մաշտոցներէն 40ը գուրկ են անկէ, որովհետեւ սկզբնական շրջանին գոյութիւն չէ ունեցած. նմանապէս մինչեւ ԺԵ դար՝ կարգ մը ձեռագիրներ չունին շարականը: Ամենահին օրինակը՝ շարականի փոխարէն ունի լոկ Ասելով Ալիւն (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար). հոս յիշատակուած միակ Ալիւնն յաջորդաբար կը վերածուի երեքի՝ Ալիւն խաչ, ալիւն խաչ, ալիւն խաչ: 1466ի եւ 1492ի Մաշտոցները կու տան խորհրդական մեկնութիւն մը թէ ինչու երեք անգամ կը կրկնուի Ալիւն խաչ. երիցս կրկնէ՝ յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Վատիկանի Ժ. Գ. դարու Մաշտոցը երեք Ալիւն խաչներէ ետք կ'աւելցնէ. Սրկ. Քարոզ. եւ եւս խաչ: Քին. Արքեմութիւն եւ փառք. Գ. անգամ:

Գէորգ Երզնկացիի կատարած մկրտութեան արարողութեան նոր խմբագրութեամբ ԺԵ դարուն կը յայտնուի Օրհնեսցի եւ սրբեսցի... շարականը, հաւանաբար Յայտնութեան ջրօրհնէքի արարողութենէն ազդուելով: Ուստի շարականը յատուկ է որոշ խումբի մը պատկանող Մաշտոցներու, սակայն ժամանակի ընթացքին, նաեւ այն ձեռագիրները որոնք չեն պատկանիր նոր համագրուած խումբին՝ կ'որդեգրեն շարականը, առանց ուղղորդութիւն դարձնելու թէ նոր շարականը խոստոր կը համեմատի հին բնագրին հետ: Ասով հանդերձ կը հանդիսանան ժ. Գ. դարու Մաշտոցներու՝ որոնք զերծ մնացած են շարականէն, պահելով հին արարողութեան երեք Ալիւն խաչները. այսպէս օրինակի համար 1626ի, 1647ի, 1648ի, 1657ի Մաշտոցները:

Սկզբնական խորագիրը կ'ըսէ. Ապա ածցէ ի սուրբ յիւղոյն յա-

ւագանն խաչանման ասելով Ալէլու (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար)։ Ածցեալ է յառաջին թէ քանի կաթիլ պէտք է կաթեցնել միւռոնէն, սակայն խաչանման, խաչաձեւ բառերը կը պահանջեն նուազագոյն հինգ կամ վեց կաթիլներ։ 1503ի Մաշտոցը Օրհնեսցի եւ սրբեսցի օրհներգին համար կ'ըսէ. երիցս կրկնեա եւ երեք կաթ միւռոն կաթեցու յաւագանն։ Երգնկացի խմբագրութեան պատկանող ձեռագիրները միւռոնը ջուրին մէջ կաթեցնելէ առաջ կը պատուիրեն. Շուրջանակի լուցանեն երկոտասան մումեղէնս։

(★) Օրհնեսցի եւ սրբեսցի շարականը գրեթէ նոյն բառերով կը գտնենք թէ՛ Վիեննական եւ թէ՛ Երուսաղէմեան տպագրութիւններուն մէջ, սակայն նկատելի են հետեւեալ կէտերը։

Վիեննական տպագրութեան մէջ շարականը սկսելէ առաջ կայ նոր յօդոնուած խորագիր մը որ կ'ըսէ. Ապա քահանայն առեալ գտարք մեռունն յաջ ձեռն խաչակնիքն անուառ ի վերայ ջրոյն։ Հոս խաչակնիք բառը շատ հաւանաբար կը նշանակէ խաչի նշան ընել առանց կաթեցնելու միւռոնը, որովհետեւ քիչ վերջ երեք անգամ Օրհնեսցի եւ սրբեսցի երգելէ ետք բացայայտ կերպով պիտի գրէ նոր խորագիր մը. քահանայն հեղու ի սուրբ մեռունէն կաթիլս ինչ խաչաձեւ ի նոյն ջուրն ասելով։ Աւելի հարազատ պիտի ըլլար Օրհնեսցի եւ սրբեսցի շարականը երգուած ատեն կաթեցնել եւ այնպէս օրհնել ջուրը, որպէսզի հարկ չըլլայ նոր խորագրի եւ օրհնութեան, նորամուտ եւ անհարազատ բանաձեւին որ կ'ըսէ. Հեղումն մեռունիս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Հոգւոյն սրբոյ միսիքարչի եղիցի յանուն սրբոյ Երրորդութեան. ամէն։ Նման բանաձեւ ոչ մէկ ձեռագիր Մաշտոց ունի, մինչ Վիեննական Մաշտոցը նոյն բանաձեւը դրած է նաեւ Յայտնութեան Զրօրհնէքի արարողութեան մէջ։

Երուսաղէմեան տպագրութիւնը խորագիրներու ետեւառջութիւն մը ունի, այսինքն Օրհնեսցի եւ սրբեսցի շարականէն առաջ կը յանձնարարէ. Կնքախաչն տանի ի մերկացուցանել գերախաչն, եւ բերէ մերկ առ ընթեր քահանային։ Մանուկը մերկացնելու ճշգրիտ տեղը ոչ թէ հոս, այլ ջուրի օրհնութենէն վերջ է, դոնէ այսպէս կը պահանջեն բոլոր ձեռագիր Մաշտոցները, առանց բացառութեան։

Երուսաղէմի օրինակն ալ Վիեննականին նման առեալ քահանայն գտարք միւռոնն ի ձեռն եւ խաչակնքէ ի վերայ ջրոյն ասելով... Օրհնեսցի եւ սրբեսցի։ Շարականը երեք անգամ կրկնելէ ետք կը հետեւի նոր խորագիր մը Հեղու սուրբ միւռոնն յաւագանն խաչանման ասելով Շրկ. ԴՁ. Առաքելոյ աղանոյ։ Աւելի հարազատ ձեւը Օրհնեսցի եւ սրբեսցի օրհներգի ատեն է միւռոնը կաթեցնելու պահը, որովհետեւ Առաքելոյ աղանոյ շարականը համեմատաբար շատ ուշ մտած է Մաշտոցներէն ներս քան Օրհնեսցի եւ սրբեսցին։ Շարականներու մասին պիտի անդրադառնանք ստորեւ։

15. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ջուրի օրհնութիւնը աւարտելուն, քահանան հրամայէ մերկանալ գերախաչան գգեստն եւ լինել կազմ ի լուացումն սուրբ։ Եւ ասէ գաղօքս. Որ կոչեցեր զճառայս քն։ Սորագիրն ու աղօթքը զեղչուած են քիչ անգամներ, հաւանաբար համառօտելու փափաքէն մղուած։

Սովորաբար քահանան կը հրամայէ մերկացնել մանուկը. 1548ի Մաշտոցը անորոշ կը ձգէ ըսելով՝ մերկացուցանեն, մինչ ԺԳ դարու օրինակ մը (Ձեռ. թիւ 144), ու յաջորդաբար 1436ի, 1464ի, 1530ի եւ ուրիշ սակաւաթիւ օրինակներ՝ քահանայն մերկացուցանել գերախաչն։ Վատիկանի թիւ 17 Մաշտոցը, դրուած 1585ին, Որ կոչեցեր աղօթքէն առաջ կը պահանջէ Սաղմոս. Լուացայց գձեսս։

Հոս է ուրեմն երախան մերկացնելու պահը առ ի լինել կազմ ի լուացումն սուրբ։

(★) Ինչպէս ակնարկեցինք քիչ առաջ, Վիեննական Մաշտոցը կամայական կերպով փոխադրած է խորագիրը Եղեկէլի մարգարէութեան եւ Պօղոսի թուղթին միջեւ՝ ըսելով. Աստ սկսանին մերկացուցանել գերախաչն երեք տղայ իցէ. եղած բացատրութիւնը չափազանց մանրամասն է, որովհետեւ ձեռագիրներու մէջ չենք գտներ սեռի զանազանութիւն։

Երուսաղէմի տպագրութիւնն ալ, որ Օրհնեսցի եւ սրբեսցի օրհներգէն առաջ տարած է երախան մերկացնելու խորագիրը, պէտք է փոխադրէ Առաքելոյ աղանոյ շարականէն ետք։

16. ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Մեր ուսումնասիրութեան համար օգտագործած 80 ձեռագիր Մաշտոցներէն 15ը, որ է միայն Գէորգ Երգնկացի խմբագրութեան պատկանող օրինակները, մկրտութենէն անմիջապէս առաջ ունին.

Եւ ապա քահանայն հարցանէ. Ձի՞նչ խնդրես։

Պատասխանէ. Խնդրեմ մկրտիլ։

Եւ ասէ. Արդարեւ խնդրե՞ս։

Եւ պատասխանէ. Հաւատով խնդրեմ մկրտիլ եւ այսօր մաքրիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց եւ ծառայիլ Աստուծոյ։

Եւ ասէ քահանայն. Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ։

(★) Այս հատուածը գրեթէ նոյն բառերով կը գտնենք Վիեննական Մաշտոցին մէջ, իսկ Երուսաղէմեան օրինակը նոյն հատուածը կը ներկայացնէ երրորդ դէմքով, այսինքն Հարցանէ քահանայն. Երախայս զի՞նչ խնդրէ...։

Մկրտութեան արարողութիւնը համառօտելու պարագային եթէ դուրս ձգուելու ըլլայ այս ամբողջ հատուածը, մեղանչած պիտի չըլ-

լանք բնագրին հարադատութեան դէմ, որովհետեւ համեմատաբար սակաւաթիւ օրինակներու մէջ ընդհանրացած է, եւ այն ալ ոչ թէ հին ու հարադատ արարողութեան բնագրին մէջ, այլ ժե-ժջ դարու փոքրամասնութիւն կազմող խումբի մը մէջ:

17. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՀԸ

Եւ իջուցանէ յաւագանն եւ խնդրեցէ քահանայն զանունն, եւ արկանէ ի սուրբ ջրոյն ի վերայ գագաթանն Գ անգամ ասելով այսպէս. Այս անուն...: Զայս Գ անգամ ասելով եւ Գ անգամ ընկղմեցուցանէ ջրովն, որ նշանակէ զերեփօրեայ քաղումն Քրիստոսի (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար):

Մկրտութեան արարողութեան ամէնէն հանդիսաւոր պահն է: Քահանան նախ կը խնդրէ երախային անունը. Վատիկանեան Մաշտոցը (Barb. 100) կ'աւելցնէ. Խնդրէ զանունն ի պապէն, մինչ ժե դարու ձեռագիր մը (թիւ 1501) ի ծնողացն: Ապա քահանան աւագան կ'իջեցնէ երախան, երեք անգամ գլխուն վրայ կը թափէ ափով ջուրը, երեք անգամ կ'ընկղմէ ջուրին մէջ, երեք անգամ կը կրկնէ մկրտութեան բանաձեւը:

Մաշտոցներու մէջ թէեւ էականին մէջ նոյն, սակայն բազմաթիւ են արարողութեան տարբերակները, այսպէս.

Մկրտեցէ զնա ի ջուրն ասելով. Այս անուն... (Ձեռ. թիւ 144, ԺԳ դար). Արկանէ զջուրն ընդ գլխովն և ասէ երիցս անգամ. Այս անուն... (Ձեռ. թիւ 487). Երիցս ընկղմեցուցանէ ի ջուրն եւ ասէ. Ա. Ա... (Ձեռ. թիւ 1011, տարի 1386). Ընկղմէ ի ջուրն եւ լնու Գ անգամ ի վերայ գլխոյն եւ ասէ. Ա. Ա... (Ձեռ. թիւ 522, տարի 1547).

Երիցս ընկղմեցուցանէ ի ջուրն եւ հանէ եւ ասէ. Ա. Ա... (Ձեռ. թիւ 338, տարի 1554):

Ինչպէս կը տեսնուի, բոլոր ձեռագիրներու մէջ ձգտումը նոյնն է, այսինքն երեք անգամ ջուրին մէջ ընկղմումը եւ բանաձեւին երեք անգամ կրկնութիւնը, ինչ որ ներկայիս չի պահուիր, որովհետեւ կը դահանանք միայն մէկ անգամ ըսելով մկրտութեան բանաձեւը, մինչ բոլոր ձեռագիրները, առանց բացառութեան, մկրտութեան բանաձեւէն անմիջապէս ետք կը գրեն. Զայս Գ. անգամ ասելով եւ Գ. անգամ ընկղմեցուցանէ...:

Գէորգ Երզնկացիի խմբագրութեամբ գրեթէ ամբողջովին այլափոխուած կը գտնենք հին խորագիրը.

Եւ ապա առնու իջուցանէ զնորընծայն յաւագանն. ձախ ձեռամբն բռնեցէ գլխն եւ աջովն գոտֆն, զգլուխն յարեւմուտս կոյս եւ ոտֆն յարեւելս, գլուխն ի բարձր, երեսն ի վեր կոյս եւ ոտֆն ի խոնարհ: Եւ խնդրեցէ զանունն, եւ առնալ ի սուրբ ջրոյն ափով հեղու ի վերայ տղային, երիցս անգամ ասելով.

Այս անուն... յանուն Հօր, եւ մին ափ ջուր հեղու ի վերայ մանկանն գլխոյն, եւ Որդւոյ եւ մին ափ այլ հեղու, եւ Հօգւոյն սրբոյ, եւ մին ափ այլ հեղու ի վերայ գլխոյն, եւ ըստ միոյ միոյ անուանցն մին մին ափ ջուր հեղու ի վերայ գագաթանն եւ ասէ. Գնեալ արեամբն...: Եւ Գ անգամ ընկղմեցէ ի ջուրն, քաղեալ զհնութիւն մեղաց, որ նշանակէ զերեփօրեայ քաղումն Քրիստոսի կցորդութեամբ. եւ լուսացէ զրովանդակ մարմինն:

Հին խումբի պատկանող Մաշտոցներու խորագիրները յատուկ դրոշմ մը ունին. կուռ են ու համառօտ, ամենեւին չեն սիրեր մանրամասն բացատրութիւններ. Երզնկացիի կատարած խմբագրութեամբ ոտնակոխ կ'ըլլայ այս կանոնը, տակաւ առ տակաւ կ'ընդհանրանայ ընդարձակը, մոռացութեան մատնելով երկաթագիր օրինակներու բոյրն ու վեհութիւնը:

(★) Վիեննայի Մաշտոցը հեռաւոր կերպով կը հետեւի Երզնկացիի խմբագրութեան խորագրին. հրատարակչները հիւսած են խորագիրներու ամբողջ էջ մը, յանձնարարելով մկրտող քահանային նորոգել գղիտաւորութիւն կատարելոյ գոյրը խորհուրդ մկրտութեան. բանաձեւէն վերջ կ'աւելցնէ. Այս է էութիւն մկրտութեան յորում արացէ հոգաբարձութիւն. իսկ եթէ չափահաս իցէ երախայն, ոչ իջուցանէ յաւագանն, այլ ձախովն կորացուցանէ զգլուխն նորա դէպ յաւագանն, եւ աջովն առնալ ի սուրբ ջրոյն մկրտէ զնա ըստ վերայգրեալ կերպի...: Մանրամասնութիւններ՝ որոնք վտարելի են բնագրէն, եւ կամ աղուցանել առանձին գրութեամբ բնագրին սկիզբը կամ վերջը:

Ձեռագիրներու հոգիին աւելի հաւատարիմ է Երուսաղէմեան տըպագրութիւնը, որ սակայն մէկ անգամ ըսել կու տայ մկրտութեան բանաձեւը եւ երեք անգամ կ'ընկղմէ մանուկը ջուրին մէջ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն սրբոյ:

18. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶՆԵՐԸ

Առանձին ընդարձակ ուսումնասիրութեամբ առիթ ունեցած ենք անդրադառնալու այս նիւթին մասին⁵, հոս կը համառօտենք՝ տալով ընդհանուր ծանօթութիւն մը:

Մկրտութեան բանաձեւ ըսելով կը հասկնանք այն խօսքերը որ մկրտութեան պահուն քահանան կ'արտասանէ, թափելով ջուրը երախային գլխուն: Արդ երկու իրարմէ տարբեր բանաձեւերու կը հանդիպինք ձեռագիր Մաշտոցներու մէջ:

Հնագոյն ձեւը պահուած է երկաթագիր Մաշտոցներու մէջ, եւ յաջորդաբար մինչեւ ժե դարու բազմաթիւ ձեռագիրներու մէջ կը գտնենք նոյնը.

Այս անուն մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունելով զազատութիւն որդեգրութեան Հօրն երկնաւորի, լեալ ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս բանաձեւին կը հետեւին շուրջ 65 Մաշտոցներ (80ի վրայ, այսինքն 80 առ 100), բնականաբար ունենալով ձեռագրական տարբերակներ:

Գէորգ Երզնկացիի խմբագրութեամբ երեւան կ'ելլէ նոր բանաձեւ մը. այսինքն

Այս անուն ծառայ Աստուծոյ, եկեալ կամաւ յերախայութիւն, յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի այժմ ի ձեռս իմ, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, գնեալ արեամբն...:

Երկրորդ բանաձեւը յատուկ է Երզնկացիի խմբագրութեան պատկանող Մաշտոցներու, որոնք համեմատաբար փոքր խումբ մը կը կազմեն, այսինքն 20 առ 100: Դիտելի է նաեւ որ այս բանաձեւով թրւական ունեցող Մաշտոցներէն առաջինը 1489ի օրինակն է (Ձեռ. թիւ 148):

Երկու բանաձեւերուն միջեւ կրնանք դասաւորել խումբ մը ձեռագիրներու, որոնք բնագրական կերպով կը հետեւին երկաթագիր Մաշտոցներու մկրտութեան արարողութեան, սակայն բանաձեւին մէջ կը տեսնուին ազդեցութիւններ երկրորդ խմբագրութենէն. այսպէս օրինակի համար.

Ա. Ա. մկրտի այժմ ի ձեռն իմ, յանուն Հօր... (Ձեռ. թիւ 178. տարի 1436).

Ա. Ա. ծառայ Յիսուսի Քրիստոսի յերախայութենէ ի մկրտութիւն գայ այժմ ի ձեռս իմ յանուն Հօր... (Ձեռ. թիւ 391, ԺԵ դար).

Ա. Ա. Ծառայ Աստուծոյ գնեալ արեամբն Քրիստոսի եկեալ կամաւ ի մկրտութիւն, մկրտի, այժմ ի ձեռս իմ, յանուն Հօր... (Ձեռ. թիւ 1895, տարի 1503).

Ա. Ա. եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի այժմիկ յանուն Հօր... (Ձեռ. թիւ 1522, տարի 1547).

Ա. Ա. ծառայ եկեալ կամաւ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր... (Ձեռ. թիւ 82, տարի 1567).

Ա. Ա. ծառայ եկեալ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր... (Ձեռ. թիւ 1163, տարի 1583).

Ա. Ա. ծառայ Աստուծոյ եկեալ կամաւ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր... (Ձեռ. թիւ 510, տարի 1593):

Կարեւոր կը համարինք նշել հոս եզական բանաձեւ մը, որ պահուած է Ս. Ղազարի թիւ 1894 Մաշտոցին մէջ, գրուած 1432ին. Զայս անուն մկրտեմ յանուն Հօր...: Հայկական բանաձեւը դործածուած է միշտ կրաւորական խմաստով. բացառութիւն է միայն այս ձեռագիրը իր ներդրածական ձեւով:

(★) Վերեւ նշանակուած զոյգ բանաձեւերէն առաջինին կը հե-

տելի Վիեննական Մաշտոցը՝ ինչ ինչ փոփոխութիւններով. Ծառայս կամ աղախինս (Այս անուն) մկրտի այժմ ի ձեռս իմ, յանուն Հօր...: Հոս նորամուտ են Ծառայս կամ աղախինս բառերը, որոնք շարադրուած են հրատարակիչներու կողմէ: Նմանապէս Երզնկացիի խմբագրութեան պատկանող ձեռագիրներու ազդեցութեամբ որդեգրուած է այժմ ի ձեռս իմ բացատրութիւնը, որ եթէ դուրս ձգուելու ըլլայ՝ կը մնայ մաքուր հարազատ բանաձեւը, որ է Այս Անուն մկրտի յանուն Հօր...:

Երուսաղէմեան Մաշտոցին բանաձեւն է. Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր...: Ինչպէս կը տեսնուի, վերեւ մեր ներկայացուցած երկու բանաձեւերէն ոչ մէկուն կը հետեւի. եթէ զեղչելու ըլլանք ծառայ Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն բառերը, կ'ունենանք երկաթագիր Մաշտոցներու խումբի բանաձեւը, իսկ եթէ աւելցնելու ըլլանք կամաւ յերախայութիւն... մկրտի այժմ ի ձեռս իմ բացատրութիւնները՝ կ'ունենանք Գէորգ Երզնկացիի խմբագրութեան բանաձեւը, որ համեմատաբար շատ քիչ ընդհանրացած է ձեռագիր Մաշտոցներու մէջ:

Ո՛րքան փափաքելի պիտի ըլլար համաձայնութեամբ ընդունիլ մկրտութեան մէկ բանաձեւ, որպէսզի ամէն հայ կնքուէր նոյն ձեւով, ինչպէս մկրտուած են մեր սուրբ հայրապետներն ու թագաւորները, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ մինչեւ Շնորհալիներ, Տըրդատ թագաւորէն մինչեւ Լեւոններ...:

19. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԵՏՔ

Լուսնալով գրովանդակ մարմինն ասեմ այսպէս. Որք ի Քրիստոս մկրտեցարուք, գրիստոս զգեցեալ էք. ալելուիա: Սղ. Բագումն եղութիւնք են արդարոց: Որք ի Հայր լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ձեռք. ալելուիա: Տուն առ տուն սաղմոսեմ սաղմոսնոյն, եւ փառս տան նովին կցրդին. (Ձեռ. թիւ 457, Թ-Ժ դար):

Այս է Ս. Ղազարի երկաթագիր Մաշտոցին խորագիրը: Մկրտութեան արարողութեան այն հատուածներէն է որ ունի ձեռագրական անթիւ տարբերակներ, մինչեւ ըսելու աստիճան թէ իւրաքանչիւր ձեռագիր կը կազմէ առանձին խումբ մը: Տարբերակները գլխաւորապէս արտասանուած խօսքերուն մէջ են, եւ շատ հաւանաբար արդիւնք է սկզբնական խորագրին նուազ յստակ ըլլալուն: Ահա զըլխաւոր ձեւերը.

Որք ի Քրիստոս մկրտեցարուք զՔրիստոս զգեցեալ էք. ալելուիա:

Սղ. ԼԳ. Բագումն նեղութիւնք են:

Եւ որք ի Հայր լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ձեռք: Փառք եւ

երկրպագութիւն: Որք ի Գրիստոս մկրտեցարուք: Եւ որք ի Հայր լուսաւորեցարուք. (Ձեռ. թիւ 199, տարի 1216, Ձեռ. թիւ 615, տարի 1434):

Որք ի Գրիստոս լուսաւորեցարուք զԳրիստոս զղեցեալ էք. ալէլուիա:

Սղ. Բազում նեղութիւնք են:

Եւ որք ի Հայր լուսաւորեցարուք սուրբ Հոգին բերկրեցի ի ձեզ. ալէլուիա: Փառք եւ երկրպագութիւն Հաւր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն: Եւ որք ի Հայր եւ յՈրդի լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ի ձեզ. (Ձեռ. Վատիկանի Barb. 100):

Որք ի Հայր եւ Որդի լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ի ձեզ. ալէլուիա, ալէլուիա:

Սղ. Բազում նեղութիւնք են արդարոց:

Որք ի Հայր եւ յՈրդի: Փառք եւ երկրպագութիւն: Որք ի Հայր (Ձեռ. թիւ 1319, տարի 1530):

Որք ի Հայր լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ձեռք. ալէլուիա: Փառք եւ երկրպագութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ: Եւ որք ի Հայր եւ յՈրդի լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ի ձեզ. (Ձեռ. թիւ 338, տարի 1554):

Որք ի Գրիստոս մկրտեցարուք, զԳրիստոս զղեցեալ էք. ալէլուիա:

Սղ. Բազում նեղութիւնք են:

Եւ որք ի Հայր լուսաւորեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ի ձեզ. ալէլուիա: Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. մէջն: Եւ որք ի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգին մկրտեցարուք, սուրբ Հոգին բերկրեցի ի ձեզ. (Գէորգեան խմբագրութիւն):

Տարբերակներէն կարելի է եզրակացնել թէ երբ քահանան լուսնայ գրովանդակ մարմինն, պէտք է նախ ըսէ Պօղոս առաքեալի խօսքերը Որք ի Գրիստոս մկրտեցարուք... որով կը հետեւի սաղմոսը Բագում մեղուքիւնք եւ արդարոց, ապա կը սկսի երրորդ յաւելումածը, որ զանազան ձեւերով կրնայ ըլլալ, համառօտ՝ ինչպէս որ է երկաթադիր օրինակներուն մէջ, ընդարձակ՝ ինչպէս կը տեսնուի վերեւ մէջ բերուած օրինակներէն:

Ունինք զանազան ձեռագիրներ, որոնք զանց կ'ընեն հատուածներ. այսպէս 1530ի Մաշտոցը (թիւ 1319) կը զեղէ առաջին մասը, Որք ի Գրիստոս մկրտեցարուք... 1338ի Մաշտոցը (թիւ 27) չունի սաղմոսը Բագում մեղուքիւնք... ԺԳ դարու թիւ 144 Մաշտոցը, ինչպէս նաեւ ուրիշ օրինակներ՝ ամենեւին չունին երրորդ մասը Որք ի Հայր... Ուրիշներ երեք մասերը ունենալով հանդերձ՝ ունին բաղմաթիւ ետեւառաջութիւններ (այս Ձեռ. թիւ 868, ԺԴ դար, թիւ 1617, տարի 1507, թիւ 1024, տարի 1579 եւն.):

(★) Այս բոլոր զանազանութիւններուն մէջ թէ՛ Վիեննական եւ թէ՛ Երուսաղէմեան տպագրութիւնները ունին ընտիր հատուածներ, այսինքն կը հետեւին հնագոյն օրինակներուն, որոնք պահուած են երկաթադիր Մաշտոցներուն մէջ: Դիտելի է սակայն որ Վիեննական

օրինակը զեղչած է Բագում մեղուքիւնք եւ սաղմոսը, իսկ Երուսաղէմեան տպագրութիւնը չհետեւելով աւանդական կարգին, կը զնէ նախ Որք ի Հայր լուսաւորեցարուք... եւ ապա սաղմոսը Բագում մեղուքիւնք եւ...:

20. ԱԻԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Եւ հանէ յաւագանէն եւ տայ ցկնփահայրն: Եւ ընթեռնու աւետարան Մատթէոսի. Յայնժամ գայ Յիսուս... ընդ որ հանեցայ:

Խորագիրին համաձայն նախ պէտք է հանել մկրտեալը աւաղանէն, եւ ապա կարգաւ աւետարանը: Այս է հարազատ ձեւը, որ Թ-ԺԸ դարերուն պահպանուած է ձեռագիրներուն մէջ: Գէորգ Երզնկացիի խմբագրութեամբ կը սկսի նոր սովորութիւն մը, այսինքն տայ ցկնփահայրն յայն քան աւետարանին որ ասէ. Իբրեւ մկրտեցաւ Յիսուս ել վաղվաղակի ի ջրոյ անտի: 1571ի Մաշտոցը (թիւ 1891) կ'ընդհատէ Աւետարանի դրութիւնը, ու միջանկեալ կարմրագիր կը պատուիրէ. Աստ հանէ յաւագանէն:

Աւետարանի կարգացումը հատուածն է Մատթ. Գ. 13-17. բացառութիւն կը կազմէ միայն Երեւանի թիւ 1001 երկաթադիր Մաշտոցը, որ սկիզբէն կ'աւելցնէ 12 համարներ (Գ. 1-17):

(★) Վիեննական Մաշտոցը կը համաձայնի ձեռագիր Մաշտոցներուն, սակայն խորագիրներու նկատմամբ ունի այնպիսի յաւելումներ որոնք անհարազատ են. այսպէս եւ ինքն (փահանայն) լուսնայ եւ սրբէ գնեռն անձեռոցան: Եւ եթէ երկու եւ աւելի իցեն երախայն, փահանայն... իսկ եթէ երկրայնութիւն հաւանական լինիցի...:

Երուսաղէմեան Մաշտոցը Մատթէոսի աւետարանէն առաջ ունի Պօղոս առաքեալի Հռովմէացիներու թուղթէն հատուած մը որ եկամուտ է, եւ կարելի է դուրս ձգել Մաշտոցէն, որովհետեւ ԺԷ. դարուն միայն յայտնուած է: Մեր օղտագործած անթիւ Մաշտոցներէն միայն հատ մը, եւ այն ալ վերջինը, գրուած 1695ին (Ձեռ. թիւ 1737) ունի ընթերցումը Հռովմ. Զ. 3-6, եթէ ոչ գիտէ՞ գի որ միանգամ... ծառայել մեզ մեղացն: Երուսաղէմեան օրինակը զեռ կը շարունակէ ընթերցումը մինչեւ 11րդ համարը... ի Գրիստոս Յիսուս ի Տէր մեր:

21. ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ

Աւետարանին կը յաջորդէ անխափան տէրունական աղօթքը Հայր մերը, եւ պատճառը՝ Գէորգ Երզնկացիի խմբագրութեան համաձայն՝ գի որդիացաւ Աստուծոյ: Խորագիրներէն յստակ չի հասկցուիր թէ ո՞վ

պէտք է ըսէ աղօթքը. եւ ասէ (ֆահանա՞ն, մկրտեալը): ԺԳ դարու թիւ 1274 Մաշտոցը կը պատուիրէ. եւ ասեմ միաբան. 1570ի օրինակը քահանային ըսել կու տայ Հայր մերը՝ ի դիմաց մկրտելոյն: 1695ի ձեռագիրը՝ ասեմ ի ձայն:

(★) Վիեննական Մաշտոցը Հայր մերէն առաջ կը դրէ. եւ ապա ֆահանայն ընդ մկրտելոյն կամ կնքաւորն ասեմ. Հայր մեր: Երուսաղէմի Մաշտոցը ոչ մէկ խորագիր ունի:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

(Շար. Բագմավեպ, 1971, ր. 1-2, էջ 36-46)

Քահանայն ասէ զաղօքս զայս.

Օրհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ ընտրեցեր քեզ ժողովուրդ ի քահանայութիւն եւ ի թագաւորութիւն, յազդ սուրբ եւ ի ժողովուրդ սեպհական. ըստ որում եւ յառաջագոյն իսկ օծեր զքահանայս եւ զթագաւորս եւ զմարդարէս՝ այսպիսի ամենասուրբ իւղով: (71ա) Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, առաքեալ շնորհս Հոգւոյդ սրբոյ ի յիւզս յայս, զի որ օծցի սովաւ՝ եղիցի նմա ի սրբութիւն Հոգեւոր իմաստութեան,

117. քահանայն] եւ BCHMgԸՅ: + եւ քահանայն JԿը: ~+ եւ ասէ քահանայն զ: > քահանայն... զայս fԳԴԶԶԹ: քահանայն... զայս] աղօթք ի վերայ եղոյն G: նոյն] աղօթք d: > ասէ B: > զայս MI JԵղը:

118. > մեր dg3: մեր] ամենակալ ԳԸ: քեզ B: զժողովուրդս B: ժողովուրդս F: + ժողովուրդ սուրբ CGHIԿԿ: + նոր ժողովուրդ dg Ըը: ~+ զնոր ժողովուրդս քեզ J: ~+ նոր ժողովուրդ քեզ 3:

119. > եւ ի թագաւորութիւն] Դ: > եւ ի թագաւորութիւն M: եւ ի թագաւորութիւն] թագաւորութեան B: > ի (թագաւորութիւն) Թ: ազդս B: ազդ CHԸԶ: > յազդ... սեպհական I: սուրբ B

120. > եւ ի (ժողովուրդ) BCGHMԳԸ Կըը: > ի (ժողովուրդ) fԴԶԶ: ժողովուրդս B: սեպհական FGdgԸ: սեպհական HMԳԿԶԶԶ: > եւ (յառաջագոյն) GHJMfԳԴԶԸԿԶԶԶԶԶ: եւ] նմանութեան BCdgը: > իսկ CGHIMdgԳԴԸԿԶԶԶ: ~ իսկ յառաջագոյն BfԶԶԶ:

121. ~ աւծեր իսկ յառաջագոյն J:

~+ նմանութեան աւծեր յառաջագոյն Ը: > եւ զթագաւորս F: > զթագաւորս G: > եւ զմարդարէս CfԶԶԶԶ: ~ զմարդարէս եւ զթագաւորս BHIdgԿ: ~ զմարդարէս զքահանայս եւ զթագաւորս Դ: ~ զմարդարէս զթագաւորս (> եւ) Զ: ~+ զմարդարէս եւ քահանայս այսպիսի եւ զթագաւորս այսպիսի ամենասուրբ Ը:

122. եւղովս BdfgԴԸԿըը: եղովս FG: եւղով HI: իւղով Զ յիւղով 3: ուղովս Ծ: իւղով զ: իւղով] մեռնաւ Դ: > եւ այժմ... տէր բարերար d: յայժմ Ը: աղաչեմ BCF GHJԾ: ~ բարերար տէր Ը: բարերար] աստուած մեր fԶԶԶ:

123. + կամեաց եւ առաքեալ J: զշնորհս 3: շնորհս Ծ: + Հոգւոյդ քո B: ~ ամենասուրբ Հոգւոյդ M: > ի (յիւզս) BCFGHIMdfgԳԴԶԸԿԶԶ զթ: յիւզս BdfgԸԶ: յիւզս I: յիւզս M: իւզս Ը: յաւիտ Ծ: իւզս զ: > այս I: զի որ] ի որք Ը: որք B: + որ nf CJ: աւծցեն B:

124. աւծցին CԸԿը: սովաւ] ի սմանէ dgը: եղիցին Bը: > նմա dg: նմա] նոցա BCԿ: > նմա ի fԶԶԶ:

125. *ի նահատակութիւն եւ յաղթութիւն հակառակամարտին, ի զօրութիւն պատուիրանապահութեան, առաքինի գործոց եւ յամենակատար հրահանգս եւ ի կրթութիւնս աստուածապաշտութեան: Որպէսզի լուսաւորեալ մտօք կեցցէ յայսմ աշխարհիս, ի փրկութիւն անձին իւրոյ, ի պատիւ եւ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, արժանաւորիլ եւ հասանել վիճակի ժառանգութեան սիրելեաց անուան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, ընդ որում քեզ Հօր եւ սուրբ Հոգւոյն, վայելէ փառք իշխանու-*

> ի Ծ: + բժշկութիւն հոգոյ եւ ի սրբութեան G: > հոգեւոր իմաստութեան ի նահատակութիւն Գ: իմաստութեամբ Ը: իմաստութիւն Թ:

125. > ի նահատակութիւն FԸ: + եւ ի զօրալիզմ նահատակութիւն Ը: > Bdgը: եւ] ի Կ: եւ յաղթութիւն] առ ի յաղթող լինել Ը: + եւ ի (յաղթութիւն) CGJMԳԳԳ ԶՅգթ: + ի յաղթութեան F: յաղթութիւն] յաղթող լինելոյ Bdgը: նոյն] աղթի Ծ: հակառակորդին CdfgԶՅգթ: հակառակ մարտին Ծ: ի] եւ ԸՅ: + եւ ի BfԶթ: > զօրութիւն Գ:

126. պատուիրանապահութեան Գ: պատուիրանապահութիւն GHԴԸԶԶ: + եւ ի պատուիրանապահութիւն Ծ: յառաքինի Ծ: > առաքինի գործոց Հ: գործովք B: + գործոց եւ վարուց Ը: > եւ Bկը: եւ] ի H: ամենակատար ԸԶԾ: յամենակատար] յամենայն C:

127. հրահանգիստ Գ: հրահանգիս Ծ: հրահանգս] հրամանս Զ: + ի հրահանգս dցը: + եւ ի հրահանգս Թ: > հրահանգս եւ ի C: > ի (կրթութիւն) B: կրթութիւն BC FGHIMdgԳԳԳԸ: կրթութիւն] մկրտութիւն Ծ: աստուածապաշտութիւն G: յաստուածապաշտութիւն Թ:

128. լուսաւորել G: + մտօք եւ առաքինի վարուց Ը: մտօք] իմաստութեւ առաքինասէր վարուք Bdgը: կացցէ BCIMԳԳԳԶԶԾԹ: ալսմ Ծ: + ի յայսմ H: աշխարհի CHԴԾ:

~ յաշխարհիս յայսմիկ Գ:

129. յանձին Ծ: իւրում C: > ի պատիւ C: ~ փառս եւ ի պատիւ Ը: սրբոյ BMԶ: սուրբ Ը:

130. երրորդութեան BCFGHIJdgԳԳԳԶ: երրորդութիւն Թ: ~ արժանաւոր լիցի GMf: ~ արժանաւոր լինել Գ: > արժանաւորիլ եւ հասանել վիճակի ժառանգութեան Զ: > արժանաւորիլ... եւ պատիւ H: > եւ GMfԳԳ: ~ եւ արժանաւոր լինիցի B: ~ եւ արժանաւոր լիցի CFIJdgԳԶԸԿԶԶ: ~ եւ արժանաւոր լինել Ծ: ~ եւ արժանի լիցի Ը: > հասանել CԳ: > հասանել վիճակի Ծ: + մասին վիճակի B: վիճակի] մասին fԶՅԹ: + ի վիճակ FJdg: + ի ժառանգութիւն B: + ի ժառանգութեան Ծ:

131. սիրելեաց Զ: + ընդ սիրելիս fԶՅԹ: + սրբոց եւ սիրելեաց Ը: անուամբք B: + անուան fԶ dցԸ: + անուան իւր Թ: ~ + ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր dfgԶԸԸԹ: ~ + ի Քրիստոս Յիսուս ի տէր մերոյ Ծ: տեառն] աստուծոյ ԶԾ: տեառն աստուծոյ] աստուծոյ մերոյ Գ: ~ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի CGԿ: ~ տեառն մերոյ Յիսուսի քրիստոսի IMԳԴՀ: ~ + տեառն մերոյ Յիսուսի քրիստոսի տեառն մերոյ F:

132. > ընդ ԶԹ: + որ օրհնեալ ընդ Ը: > որում f: > որում քեզ Ը: > որում... վայելէ Ծ: > քեզ ԴԶ: > քեզ... հոգւոյն Զ: > քեզ... վայելէ fԹ: + հօր ամենազաւրի

թիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից. ամէն: Եւ ապա զըսերն յաւազանն արկանէ խաչանման: Սաղմոս ԻԸ.

135

Ձայն Տեառն ի վերայ ջրոց:

Ընթերցուած յեզեկիելէ մարգարէէ.

Այսպէս ասէ Աղովնայի Տէր. եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսլիք յամենայն պղծութեանց ձերոց, եւ յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ. եւ տաց ձեզ սիրտ նոր եւ ոգի

եւ որդւոյդ միածնի եւ կենդանաբար սուրբ հոգւոյդ B: + հօր ամենազաւրի CFIGԳԳԶ: + հօր ամենազաւրի J: + հայր ամենազաւր Ծ: եւ սուրբ հոգւոյն] հանդերձ կենդանաբար եւ ազատիչ սուրբ հոգւոյդ CFIGԳԶ: նոյն] հանդերձ կենդանաբար եւ ազատիչ սուրբ հոգւովդ IJԿԾ: նոյն] միանգամայն հանդերձ կենդանաբար եւ ազատիչ սուրբ հոգւովդ M: > սրբոյ ց: սուրբ] ամենասուրբ Ը: հոգւոյդ ցԸ: ~ հոգւոյդ սրբոյ d: ~ հոգւոյն սրբոյ Գ: > վայելէ... ամէն Ը: > փառք... ամէն F: յիշխանութիւն Ծ: > իշխանութիւն... միշտ եւ Թ: > իշխանութիւն... ամէն JdfgԳԶԶ: > եւ (պատիւ) Ծ:

133. > եւ պատիւ... ամէն CԸ: > պատիւ... ամէն ԿԶ: յայժմ Ծ: > այժմ եւ... ամէն M: > եւ միշտ... ամէն BԳԾ: > միշտ... ամէն IԾ: > եւ յաւիտեանս... ամէն G: > յաւիտեանից Թ:
134. > եւ F: > ապա MfԳԶԶ: արկանէ] անցէ I: ~ արկանէ զըսերն յաւազանն FHDgԳԴԸԿԶ: ~ արկանէ զըսերն յաւազանն M: ~ արկանէ զըսերն յաւազանն Հ: ~ արկանէ զըսերն աւազանն Ծ: ~ անէ զըսերն յաւազանն BGfԶ: ~ անէ ջուր յաւազանն C: ~ անցէ զըսերն յաւազանն JԹ: ~ անէ զըսերն յաւազանն Ծ: > խաչանման FMfԳԶԶԹ: + եւ խաչանման եւ այս կանովն կատարի J: > սաղմոս ԻԸ Ը: սաղմոս ԻԸ] եւ ասէ dfgԳԶԶԹ: նոյն] եւ ասեն Ծ: նոյն] ասելով Ծ: + եւ ասեն զսաղմոս

B: + եւ ասէ սաղմոս CԸ: + ասելով սաղմոս F: + եւ ասեն սաղմոս H: > ԻԸ HԳԿԶ: ԻԸ] կց. FM: + ԻԸ կց. GJ: + ԻԸ մատուցէ տեառն որդի I:

135. ջուր JMDgԳԶԶԶ: + ջուրք եւ աստուած ԻԿԾ: + ջուրք եւ աստուած փառաց fԸԹ: + ջուրք եւ աստուած փառաց որ. B: + ջուրք եւ աստուած Կ:

136. ընթերցուած ԸԹ: յեզեկիելէ dց: եզեկիելի Ը: յեզեկիելի Թ: յեզեկիելի] յեսայի Զ: + ի յեզեկիելի A: > մարգարէէ FGԳԾ:

Հին եւ նոր կտակարանի հատուածները առած ենք տպագրի աւտուածաշունչէն (տպ. Ս. Ղաղար, 1860):

137. աղովնա AfԶԸԹ: աղովնա B: աղովնա GԸ: աղովնայի H: աղովնա M: աղովնայ ԴԶ: աղովնայ Հ: աղովնա Ծ: ատոնիայ Ծ: աղովնա Գ: > աղովնայի CFdգԳ: + եւ առից գնեց ի հեթանոսաց եւ ժողովեցից յամենայն ազգաց եւ տարայց գնեց յերկիրն իսրայէլի եւ ցանեցից B: > եւ (ցանեցից) AԿ:

138. սրբեցից CJdgԸ: ամենայն Ծ: + գնեց յամենայն Cg: պղծութեանց Ծ: > ձերոց Թ: ամենայն (կռոց) ԸԾ: յամենայն կռոց] ի կռոց Դ: 138-164. > յամենայն կռոց... պատասխանի F (թուղթ ինկած է):

139. > ձերոց fԶԾ: սրբեցից A: սրբեցից] զերծեցից CfgԶԶԶԹ: նոյն] զերծեցից Ծ: > սրբեցից զձեզ H: > եւ տաց ձեզ Ծ: > եւ տաց... նորոգեցից ի ձեզ ACGMԴՀ:

- սանել զարքայութիւն Աստուծոյ: Ասէ ցնա Նիկողեմոս. Զիա՞րդ կարէ մարդ ծնանել որ ծերն իցէ, միթէ մա՞րթ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնանել: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ, զի ծընեալն ի մարմնոյ՝ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյն՝ հոգի է, դու մի զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել վերստին. զի հոգի՝ ուր կամի շնչէ, եւ զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի դայ կամ յո երթայ. սոյնպէս եւ ամենայն ծնեալն ի Հոգւոյն:

Քարգուրթին ի վերայ մկրտութեան ջրոյն.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեցումք:

166. յարքայութիւն GIMdfgՀՅզըթ: արքայութիւն Ձ: արքայութեան Շ: զարքայութիւն աստուծոյ զկեանսըն յաւիտենից Դ: աստուծոյ իւրկնից Բ: աստուծոյ մտանել Ձ: ասէ ցնա Նիկողեմոս պատասխանի ետ Նիկողեմոս եւ ասէ ցնա (> ցնա M) ABCGHJMԴՀՇ: > ցնա Ձ: զիարդ զի Թ: + տէր զիարդ Բ: > զիարդ... ծերն իցէ Շ:
167. ծնանել H: ծնանիլ Կ: ծնանէ Յ: + վերստին ծնանիլ G: > որ Յ: ծերն ծնեալ ACIMԿ: + մարթ ինչ CHIJMdfgԴԶԸՉզըթ: յանդրէն Յ: > անդրէն Gdg: ~ անդրէն կրկին յորովայն մաւր իւրոյ C: որովայն Շ: + ի յորովայն H: ծնանիլ Կ:
169. + ասէ ցնա ACHIJdgԴԸՀՇը: > ամէն ամէն ասեմ քեզ HM > ոք Բ: ~ ոք ոչ gfgԿը:
170. > եւ ի հոգւոյ Շ: կարէ մտանել մտանէ HdgԴՇ: մտանել տեսանել B: զարքայութիւն B: արքայութիւն Յ: յարքայութեան Շ: աստուծոյ իւրկնից M:
171. եւ զի Ձ: ծնալն Շ: > (հոգի) է ABCFGHIMdgԴԸՀՇը:
172. զարմանար G: զանրմանար Ձ: թէ CGHԳԿ: եթէ ABfԶԸՀթ: ~ + զի ասացի թէ M: > քեզ
173. > եւ CgԴՇ: եւ այլ Ձ: ծայն Յ: + միայն լսես FԶըթ:
174. յուստի Շ: յո՞ ո՞ւր Շ: նոյնպէս AdfgԴԶԿՀԶԸՇ: > ամենայն Թ:
176. քարոզ I: քարոզէ J: + եւ քարոզէ AԳ: + եւ քարոզէ սարկաւազն զ: քարոզութիւն... ջրոյն] եւ սարկաւազն քարոզէ F: նոյն] քարոզէ սարկաւազն GԸԶՇ: նոյն] սարկաւազն քարոզէ HԴԿը: նոյն] քարոզ M: նոյն] քարոզէ dfgԴԶ: նոյն] եւ քարոզէ եւ ասէ Թ: ի վերայ վասն C: > ի վերայ մկրտութեան ջրոյն BԳ: > մկրտութեան զ: ~ մկրտութեան ի վերայ J: + ջրոյն այսպէս զ:
177. ~ 177-8] 179-180 BHGIJMdfgԴԶԸԿԶԸՇըթ: + եւ եւս խաղաղութեան գտէր վասն Դը: > վասն խաղաղութեան... եկեղեցւոյ զտէր աղաչեցումք F:
- 177-180. վասն խաղաղութեան... անձանց մերոց զտէր աղաչեցումք] վասն ի վերուստ խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զտէր C:

180. Վասն ի վերուստ խաղաղութեան (72բ) եւ փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեցումք:

Վասն հայրապետին մերոյ կենաց եւ հաւատոյ զՏէր աղաչեցումք:

Վասն զի Տէր ուղղեացէ զգործս ձեռաց քահանայիս՝ որ առնէ զմկրտութիւնս զՏէր աղաչեցումք:

185. Վասն սրբելոյ առաջիկայ ջրոյս, եւ զալ գործակցութեանն

նոյն] վասն ի վերուստ խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հայր: Դ: խաղաղութիւն B: յամենայն Յ: > ամենայն B: > եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ AՀԶ: > եւ հաստատութեան... եկեղեցւոյ զտէր աղաչեցումք HMC: հաստատութիւն B:

178. > սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեցումք dg: > զտէր աղաչեցումք B:

179. > եւ փրկութեան GԳԴ: > եւ փրկութեան անձանց մերոց MԶ: > եւ փրկութեան անձանց մերոց զտէր աղաչեցումք AՀ: փրկութիւն Ձ: փրկութեան] պահպանութեան Բ: > անձանց մերոց H: > անձանց մերոց զտէր աղաչեցումք dg:

180. + աղաչեցումք լուր տէր եւ ողորմեա J:

181. + վասն լսելի լինելոյ ի վասն F: + եւ վասն Բ: հայր F: հայրապետին... հաւատոյ զտէր աղաչեցումք] եպիսկոպոսին այս անուն կենդանութեան զտէր H: > մերոյ F: + մերոյ այս անուն GԸ: + մերոյ այս անուն ԳԸԿԳԹ: + մերոյ այս Շ: > մերոյ... հաւատոյ զտէր աղաչեցումք dg: + կենաց եւ փրկութեան B:

- > կենաց եւ հաւատոյ ԳԶ: կենաց եւ հաւատոյ] եպիսկոպոսին մերոյ այս անուն Ը: > կենաց եւ հաւատոյ զտէր աղաչ. M: կենաց եւ հաւատոյ զտէր աղաչ] Կ. վասն եպիսկոպոսին մերոյ այս անուն զտէր Բ: > եւ հաւատոյ I: եւ հաւատոյ] անմահութեան Շ: > եւ հաւատոյ զտէր աղաչ. FG: > հա-

ւատոյ զ: հաւատոյ] փրկութեան CfԴԶԿԳԹ:

- 183-184. > վասնզի... զմկրտութիւնս զտէր աղաչ. GH: > զի տէր Ը: > տէր fԶԶԳ: ուղղեցէ A: իւղիղեցէ Յ: ուղղեցէ Շ: ուղղելոյ Ը: + ուղղեցէ զգնացս սորա եւ զ: ըզգործս ձեռաց] զգնացս սորա եւ C: + ձեռաց սոցա եւ BIJMԳԹ: + ձեռաց մեր եւ F: + ձեռաց մերոց եւ dgԸԳԹ: + ձեռաց մերոց Դ: + ձեռաց սոցա եւ Կ: + ձեռաց սոցա գտէր վասն Ձ: + ձեռաց սոցա ի Շ: զքահանայիս BԿ: զքահանայս JԳ: քահանայ M: քահանային Ձ: > քահանայիս Դ:

184. առնէ զմկրտութիւնս] հանդերձեալ է մկրտել dg: զմկրտութիւն ՁԹ: ~ զմկրտութիւնս առնէ BIJMԳԸԶԳ: ~ զմկրտութիւն առնէ Շ: ~ ի մկրտութիւնս զոր առնեմք Դ: > զտէր աղաչ. B:

185. վասնզի MԴԿԶ: սրբոյ CԸ: սրբեցէ ԻԿԶ: սրբեցի M: սրբելով dg: սրբութեան Ը: > սրբելոյ GH: + սրբեցէ տէր Դ: սրբելոյ առաջիկայ ջրոյս եւ] զի սրբեցէ ըզջուրս զայս Դ: զառաջիկայ fԳ: առաջիկայ ԴԴԿԶ: զջուրս ԴԴԿԶ: > ջուրս fԳ: + ջուրս այս M: > եւ IMԴԿԶ: > եւ զալ dg: եւ զալ... հոգւոյն սրբոյ] առնել զաւրհանութիւնս յորդանանու H: > զալ GԸ: զալ] կալ fԶ: զալ] կայ Յ: ~ զալ եւ Բ: > զալ գործակցութեան... վասն Շ: գործակցութեամբ MԸ: գործակցի լինել dgԸ: գործակցութիւն Ձ: + ի գործակ-

Հոգևոյն սրբոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւնն Յորդանանու զՏէր աղաչեսցուք:

190 Վասն լինելոյ սմա բժշկութիւն Հոգևոյ եւ մարմնոց զՏէր աղաչեսցուք:

Վասն վերածնելոյ որք ի սմա մկրտին լինել որդիս լուսոյ եւ ճշմարտութեան զՏէր աղաչեսցուք:

195 Յիշելով զԱստուածածինն եւ զմիշտ կոյսն Մարիամ, եւ զՄկրտիչն Յովհաննէս եւ զամենայն սուրբս եւ նոքօք զՏէր աղաչեսցուք:

ցութիւն BCIJFԳԻԶԿԹ: > սըր-
բոյ dg:

186. ~ սրբոյ Հոգևոյն Ը: ~ սուրբ Հոգևոյն Ը: + աղաչեսցուք Վասն առաջիկա ջրոյս եւ որք հանդերձեալ եմ հաւատով ընդունել գործնութիւն ի սմանէ գտէր Գ:

187. > Վասն ընդուն... յորդանանու ըզտէր աղաչեսցուք CdգԳԹ: Վասն... յորդանանու զտէր աղաչ... Վասն առաջիկա ջրոյս եւ որ հանդերձեալ եմ հաւատով ընդունել զաւրհնութիւնս յորդանանու զտէր շնորհաւոր միածինն որ լուսաւորեաց զմեզ զտէր M:

187-190. > Վասն... մարմնոց զտէր աղաչեսցուք Ը: ընդունելով ԱՀ: օրհնութիւնս Ծ: զօրհնութիւնն զշնորհան J: + յորդանանու շնորհաւոր միածինն BԸգ: + յորդանանու շնորհաւոր միածինն որ լուսաւորեաց զմեզ Գ:

189. > Վասն... մարմնոց զտէր աղաչեսցուք fՁՁԾԹ: լինելով dg: բը-
ժիշկ HM: + ի բժշկութիւն Jdg
ԳԿ: Հոգևոյ CHIJdgԳԸՀՅգ: > եւ
Գ: մարմնոյ CHIJdgԳԸՀՅգ: +
մարմնոց մեր(ոց) B: + մարմնոց
սորա G:

191. > Վասն... ճշմարտութեան զտէր
աղաչ. HԳ: Վասն... ճշմար. զտէր
աղաչ. Վասն ի վերուստ ծնիցելո
սմա լինել որդիս լուսո եւ որդիս
տուրնջեան զտէր M: վերածնելոյս
CfԿԸԹ: վերածնելոյս FGԾ: վե-

րածնելոյ IdgԳԸգ: ծնելոց Զ: վեր-
ստին ծնելոց 3: վերածնելոց] ման-
կանս Ը: որ BCԸ: > որք GIfԳԸ
ՁՅԾԹ: որք] առ Ը: ի սմա] ի
սմանէ GԳԸՅ: ~ լինել սմա (>
մկրտին) Ը: > մկրտին GIdfgԳԸԿ
ՁՅԾԸԹ: ~ մկրտին ի սմա J: ~
մկրտի ի սմա Ը: ~+ մկրտի ի
սմանէ լինելով սմա C: ~+ յայսմ
որ մկրտին ի սմա Ը: AFJՀ Հու-
նէին լինել. մենք աւելցուցինք՝ հե-
տեւելով միւս ձեռագիրներուն:
յորդիս FJ:

192. > եւ dgՅ: + եւ որդիս Ծ: ճըշ-
մարտութեամբ dgՅ: ճշմարտու-
թեան] որդիս տուրնջեան BCfԳԸ
ԸգԹ: նոյն] տուրնջեան Ը:

193. + սուրբ զաստուածածինն CIԸՅ:
+ գտուրբ զաստուածածինն MfԸ:
+ գտուրբ աստուածածինն Գ: +
գամեմասուրբ զաստուածածինն Ը:
> եւ JԾԸ: եւ զմիշտ] զսուրբ Գ:
միշտ ՁԾ: > մարիամ եւ Ը: > եւ
Ծ: > եւ զմկրտիչն Յովհաննէս եւ
Յ:

194. + գտուրբ մկրտիչն GHJԸԿ: ~+
գտուրբ Յովհաննէս մկրտիչն MԸ:
~+ սուրբ ունեւս մկրտիչ Ծ:
~+ գտուրբ Յովհաննէս մկրտիչն
եւ սուրբ ստեփաննոս մաթաթիայն
Ը: > եւ զամենայն սուրբս H:
ամենայն Ծ: սուրբ Ծ: + սուրբս
աստուծոյ Ը: > եւ (նոքօք) ԳԿԸՅ:
